ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԼԻՈՅԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ



Հոդվածների ժողովածու

Պրակ Ա.

АРА ГЕВОРГЯН

ПОД СЕНЬЮ КЛИО

Сборник статей

Часть I.

Авторское издание
Ереван 2024

ARA GEVORGYAN

UNDER THE SHADE OF CLIO

A Collection of Articles

Part I.

Author's Edition
Yerevan 2024

9(47.925)
Գ-47
h2

ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԼԻՈՅԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

Հոդվածների ժողովածու

Պրակ Ա.

6734

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հեղինակային հրատարակություն
Երևան 2024

ՀՏԴ 94(479.25):355/359(08)
ԳՄԴ 63.3(5Հ)+68գ4
Գ 479

Գևորգյան Ա. Մ.
Գ 479 Կլիոյի հովանու ներքո. Հոդվածների ժողովածու. Պրակ Ա.- Երևան, Հեղինակային հրատարակություն, 2024 թ., 96 էջ:

Ժողովածուի չորս հոդվածներում վերլուծվում են հետևյալ հարցերը. 1. Հայոց պատմության հնադարից միջնադար անցման ժամանակաշրջանի հստակեցումը և նոր պարբերականացման անհրաժեշտությունը. 2. Կատաֆրակտների՝ անտիկ աշխարհի գերծանր հեծելազորի արդյունավետության գնահատումը արդի ռազմական պատմագիտությունում. 3. Ռուս փիլիսոփա Ալեքսեյ Լոսևի (1893-1988) գիտական ժառանգության կարևորագույն մասի՝ անտիկ փիլիսոփայության պատմությանը նվիրված աշխատությունների նշանակությունը և դրանք հայերեն թարգմանելու անհրաժեշտության հիմնավորումը. 4. «Հայոց պատմություն» բազմահատորյակի առաջին հատորի երկրորդ գրքում Հին Հայաստանի ռազմական պատմության շարադրման ժամանակ թույլ տրված որոշ վրիպակների մասին:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, ռազմական պատմության և անտիկ փիլիսոփայության պատմության մասնագետների, նաև ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 941 (479.25) :355/359
ԳՄԴ 63.3(2Հ)+68

ISBN 978-9939-0-5176-5

© Ա. Գևորգյան, 2024 թ.

Նվիրվում է Արցախյան ազատամարտի հերոս
Լեոնիդ Ազգալդյանի
պայծառ հիշատակին

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Տիկնոջս և զավակներիս սույն հոդվածաշարի ստեղծման ժամանակ ցուցաբերած համբերության և փոխըմբռնման համար, ինչպես նաև «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» հրատարակչության մասնագետներին և անձամբ տնօրեն Մկրտիչ Կարապետյանին՝ աջակցության և որակյալ աշխատանքի համար:

ՆԱԽԱԲԱՆ

Կլիոն՝ հին հունական պատմության մուսան, ոգևորում էր Հին Հունաստանի պատմիչներին՝ ստեղծելու իրենց հրաշալի ստեղծագործությունները: Նա «մեծապես նպաստեց» միջնադարյան և նոր եվրոպական պատմագրության աննախադեպ զարգացմանը: Ուստի եթե ոչ բոլոր պատմաբանները, ապա ես հավատում եմ, որ գործում եմ Կլիոյի հովանու ներքո:

«Կլիոյի հովանու ներքո» գրքերի և հոդվածների ժողովածուների մատենաշարը այսուհետև լինելու է այն հարթակը, որտեղ մտադիր եմ ընթերցողին ներկայացնել իմ պատմական հետազոտությունների արդյունքները:

Առաջին պրակի չորս հոդվածներում վերլուծվում են հետևյալ հարցերը՝ Հայոց պատմության հնադարից միջնադար անցման ժամանակաշրջանի հստակեցումը և նոր պարբերականացման անհրաժեշտությունը, կատաֆրակտների՝ անտիկ աշխարհի գերծանր հեծելազորի արդյունավետության գնահատումը արդի ռազմական պատմագրության մեջ, ռուս փիլիսոփա Ալեքսեյ Լոսևի (1893-1988) գիտական ժառանգության կարևորագույն մասի՝ անտիկ փիլիսոփայության պատմությանը նվիրված աշխատությունների նշանակությունը և դրանք հայերեն թարգմանելու անհրաժեշտության հիմնավորումը, «Հայոց պատմություն» բազմահատորյակի առաջին հատորի երկրորդ գրքում Հին Հայաստանի ռազմական պատմության շարադրման ժամանակ թույլ տրված որոշ վրիպակների մասին:

Հոդված 1.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՆԱԴԱՐԻՑ ՄԻՋՆԱԴԱՐ ԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ ԵՎ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր. *Հայաստան, Հռոմեական կայսրություն, Սասանյան տերություն, ուշ հնադար (Late Antiquity), վաղ միջնադար, համաշխարհային և Հայաստանի պատմության պարբերականացում, ժամանակակից պատմագիտությունը Հայաստանում:*

Նախաբան

Պատմության պարբերականացումը և ժամանակագրությունը պատմական գիտակարգի ողնաշարն են: Նրանք անշարժ, առավել ևս հավերժ՝ մեկընդմիշտ կազմված հաստատուններ չեն և ճշտվում ու հստակեցվում են պատմական գիտակարգի զարգացմանը զուգընթաց: Այդպիսով՝ նրանք միշտ արտահայտում են պատմական գիտության զարգացման որոշակի փուլ: Արդի պատմագրության նվաճումները հասունացրել են Հայաստանի պատմության հնադարից միջնադար անցնելու ժամանակաշրջանը ճշտելու խնդիրը:

Դեռ 2011 թ. ես առաջարկել էի հայկական հնադարի պայմանական ավարտը համարել ոչ թե 226 կամ 301 թ., այլ Արշակունիների դինաստիայի անկման տարեթիվը՝ 428 թ.[1]: Հետագայում համոզվեցի, որ իմ առաջարկած պատմական փուլերի սահմանազատումը արհեստածին է, չի հենվում հստակ հիմնավորված գաղափարի վրա: Արշակունիների անկումը Մեծ Հայքում չէր առաջացրել այնպիսի գործընթացներ, որոնք արմատական ձևով կվերափոխեին երկրի բնակչության զանգվածային հոգեբանությունը կամ տնտեսական ու մշակութային կյանքը: V դ. առաջին կեսին դեռ շատ քչերն էին գիտակցում 428 թ. Հայոց թագավորության վերացման բացասական

ազդեցությունը Հայաստանի հետագա պատմական ճակատագրի վրա: Հնադարից միջնադար անցման ժամանակաշրջանի հստակեցման համար անհրաժեշտ էր հենվել պարբերականացման ավելի հիմնավոր հայեցակարգերի վրա: Հարցի հետագա ուսումնասիրությունը հանգեցրեց հարցի լուծման իմ ներկա մոտեցումներին:

Սույն հոդվածում վերլուծվում է անցած դարի 60-ական թվականներին բրիտանական հետազոտողների առաջարկած և արդի գիտական աշխարհում լայն ճանաչում գտած ուշ հնադարի (Late Antiquity) հայեցակարգի շրջանակում Հայաստանի պատմության պարբերականացման ճշտման խնդիրը: Հոդվածում քննարկվում է նոր մոտեցման հետ կապված հայագիտական որոշ հետազոտությունների կատարման անհրաժեշտությունը, որոնց արդյունքները պարտադիր պետք է քննարկվեն տարբեր գիտաժողովներում: Մտքերի փոխանակումը պարտադիր է՝ միայն բովանդակալից քննարկման շնորհիվ է հնարավոր բացահայտել առաջարկվող հայեցակարգի մեզ այսօր անտեսանելի հնարավոր «ստորջրյա խութերը», առաջարկել հայ պատմագրության նոր հիմնավորված մոտեցումները, որից հետո հաղթահարել հին մտածելակերպի իներցիան: Միայն որոշ միասնական գաղափարի հասնելով է հնարավոր հաղթահարել նոր պարբերականացման ընկալման հնարավոր դժվարությունները:

Արևմտյան պատմագրություն

XVIII դ. մինչև XX դ. 60-ական թթ. եվրոպական պատմագրությունը հին աշխարհի պատմության պայմանական ավարտն էր համարում 476 թ., երբ Հռոմը գրաված վարձկան վեստգոթ Օդոակրը հայտարարեց, որ Արևմտահռոմեական կայսրությունը վերացել է, և իրեն հռչակեց Իտալիայի թագավոր: Նա արևմտահռոմեական կայսերական իշխանության նշանները ուղարկեց Կոստանդնուպոլիս և ճանաչեց արևելահռոմեական կայսրի գերիշխանությունը:

XVIII–XX դդ. առաջին կեսի արևմտակենտրոն մտածելակերպը եվրոպացի գիտնականներին թույլ չտվեց նկատել, որ Հռոմի «աշ-

խարիակործան» գրավումը գրեթե աննկատ մնաց Արևելահռոմեական կայսրության տնտեսական, հասարակական և հոգևոր կյանքում և Արևմտահռոմեական կայսրության ծայրամասային նահանգների մեծ մասում: Արևմտահռոմեական հասարակության կյանքում ևս շատ մեծ ցնցում չառաջացավ: Հռոմը ևս մեկ անգամ թալանվեց, սակայն չկործանվեց. գոթական տիրապետությունը դաժան չէր, տեղական իշխանության ինստիտուտները ևս պահպանվեցին և սկսեցին սպասարկել նոր տերերին: Հռոմում շարունակում էին կառավարել Օդոակրի նշանակած կոնսուլները (կոնսուլատը տևեց մինչև 630 թ.), ձևականորեն հավաքվում էր ծերակույտը: Հռոմեական գահազրկված երիտասարդ կայսր Ռոմուլուս Ավգուստուսին չսպանեցին, միայն աքսորեցին Լուկուլլուսի նախկին կալվածքը Կամպանիայում, որտեղ նա, իրեն նշանակված ցմահ թոշակով, ապրեց մինչև իր կյանքի վերջը: Օդոակրը ճանաչելով արևելահռոմեական կայսրի գերիշխանությունը, նրանից իրավունք ստացավ թագավորելու Իտալիայում: Իտալիայում, Գաղղիայում, Աֆրիկայում անխաթար շարունակվում էր հռոմեացի քաղաքացիների հասարակական և հոգևոր կյանքը. ստեղծագործում էին ճարտարագետները, գիտնականները, փիլիսոփաները, բանաստեղծները[13,22]:

XX դ. երկրորդ կեսի անտիկ և միջնադարյան ժամանակաշրջանների ուսումնասիրության զգալի առաջընթացը ցույց տվեց, որ Միջերկրածովքի IV–VII դդ. իրական պատմական պատկերը շատ ավելի բարդ է և հեռու է ընդունված գիտական պատկերացումներից: Նախկին պարզունակ սխեմատիկ մոտեցումները չէին արտահայտում պատմական իրականությունը, քանի որ.

- Հռոմի և Իտալիայի քաղաքների մեծ մասի ներքին կյանքը շարունակում էին ղեկավարել տեղական ինքնակառավարման մարմինները, մասնավորապես Հռոմում՝ կոնսուլները,
- չնայած բազմաթիվ անկումային երևույթներին, Արևմուտքում, Արևելահռոմեական կայսրությունում շարունակվում էր բուռն քաղաքական, տնտեսական, հասարակական և հոգևոր կյանքը,

- IV–VII դարերից մեզ հասած և առայսօր բավարար չուսումնասիրված հսկայածավալ գրականությունը՝ արձակագիրներ, բանաստեղծներ, աստվածաբաններ, փիլիսոփաներ, ճարտարապետներ, ճարտարագետներ, մաթեմատիկոսներ, բժիշկներ, զինվորականներ և այլք, բազմիցս գերազանցում է նախորդ 1500 տարիներից մեզ հասած ողջ գրական ժառանգությունը և անտիկ գրավոր ժառանգության անքակտելի մասն է,
- Արևելահռոմեական կայսրության պաշտոնական լեզուն մինչև Մավրիկիոս կայսեր մահը՝ 602 թ., բացարձակապես մնում էր լատիներենը. միայն հետագայում դանդաղորեն, բայց անշեղորեն սկսեց օգտագործվել նաև հունարենը,
- Արևելահռոմեական կայսրությունում գործում էին հռոմեական օրենքները, հռոմեական նիստուկացը, պահպանվում էին որոշ հեթանոսական հավատքներ, որոնք զգալիորեն թուլացրել էր հաղթականորեն տարածվող քրիստոնեությունը,
- հռոմեական օրենքները մշակվեցին և Հուստինիանոս կայսեր ջանքերով վերջնական տեսք ստացան 535–565 թթ.,
- չնայած IV–VI դարերում Միջերկրածովքի ու հարակից երկրների հասարակական կյանքում դանդաղ, բայց անշեղորեն սկսում էր գերակշռել քրիստոնեական մտածելակերպը, սակայն գոյություն պահպանած հեթանոսական գաղափարախոսության կրողները դեռ ազդեցիկ ու բազմաթիվ էին՝ փիլիսոփաներ, բժիշկներ, ճարտարագետներ, զինվորականներ և այլք,
- հասարակության որոշ խավերի մեջ կար Հռոմեական կայսրության միասնության և հզորության վերականգնման հստակ պահանջ, որը VI դ. առաջին կեսին մասամբ իրագործեցին Հուստինիանոս Ա կայսեր հաղթանակած բանակները: Բարբարոսների տիրապետությունից ազատագրվեցին ամբողջ Իտալիան և նախկին Արևմտահռոմեական կայսրության նահանգների զգալի մասը,
- IV–VIII դդ. Արևելահռոմեական կայսրության բնակիչները

(նաև նրանց բոլոր հարևանները) իրենց երկիրը միշտ անվանել են Հռոմ. Բյուզանդիա անվանումը նոր ժամանակների եվրոպական գիտնականների տրված պայմանական անվանումն էր, որը այսօր ոմանց կողմից սխալ է ընկալվում որպես Արևելահռոմեական կայսրության ինքնանվանում:

Մինչև XX դ. երկրորդ կեսը գիտնականների մեծ մասը ընդունում էր Հին Հռոմի պատմության հետևյալ պարբերականացումը.

- Իտալիայի նախահռոմեական շրջան՝ հնագույն ժամանակներից – 754 թ. մ.թ.ա.,
- Հռոմ քաղաքի հիմնումը, էտրուսկյան գերիշխանության և թագավորական շրջան՝ 754/753 – 510 թթ. մ.թ.ա.,
- հանրապետական շրջան՝ 510 – 31/27 թթ. մ.թ.ա.,
- պրինցիպատ՝ 31/27 թ. մ.թ.ա. – 284 թ.,
- դոմինատ՝ 284 – 476 թթ.:

XX դ. երկրորդ կեսին բրիտանացի, իտալացի, հետո նաև այլ եվրոպական գիտնականների մեծ մասը ընդունեց Հին Հռոմի պատմության պարբերականացման նոր սխեմա: Ուշ հնադարը (The Late Antiquity)՝ 284–602/641 թթ., համարվեց անտիկ աշխարհի վերջին ժամանակաշրջանը.

- դոմինատ՝ 284–476 թթ.,
- նախահուստինիանոսյան և հետհուստինիանոսյան ժամանակաշրջաններ՝ 476–602/641 թթ.:

Ուշ հնադարի վերջին պայմանական ամսաթիվը առաջացրեց որոշակի բանավեճ՝ սկսած Հուստինիանոս Ա-ի կողմից Աթենքի ակադեմիայի փակման տարեթվից՝ 529 թ., մինչև Հուստինիանոս Ա-ի մահը՝ 565 թ., կամ իր մշտական ախոյան՝ պարսից արքայից արքա Խոսրով Անուշիրվանի մահը՝ 579 թ.: Գիտնականների մեծ մասը սահմանագիծ համարեց Մավրիկիոս (Մորիկ) կայսեր մահվան տարեթիվը՝ 602 թ., քչերը՝ 636/641 թ. իսլամական արաբական նվաճումները: Որոշ մասնագետներ միջնադարի սկիզբը նույնիսկ հասցնում էին մինչև VII դարի երկրորդ կեսը, 655 թ.՝ Սասանյան Պարսկաստանի կործանումը արաբների կողմից, իսկ Պիթեր Բրաունը՝ ծայրահեղ 750 թ.[10]:

Բրաունի պատմական ժամանակաշրջանի ընկալումը մեծ ազդեցություն ունեցավ գիտնականների վրա. 2000 թ. նրա գիրքը վերահրատարակվեց: 2024 թ. գիրքը թարգմանվեց ռուսերեն, վերջաբանում թարգմանիչները նշեցին, որ թարգմանում են այնպիսի դասական պատմական հետազոտություն, որի ուսումնասիրությունը պարտադիր է աշխարհի բոլոր պատմական և հարակից ֆակուլտետներում: Նրանք զգուշացրին, որ այս գիրքը Պիթեր Բրաունի պատմական հայեցակարգերի սկզբնական շարադրությունն է, որից հետո հեղինակը հսկայական աշխատանք է կատարել[10]: Բրաունի մոտեցման մեջ չկան Արևմուտքի և Արևելքի հասարակությունների նկարագրման նախկին քարացած կարծրատիպերը. համաշխարհային պատմությունը ներկայացվում է որպես մեկ միասնական գործընթաց: Պիթեր Բրաունի գրքին նախորդել էր Առնոլդ Ջոնսի մենագրությունը (A. H. M. Jones Magesterial Work «The Later Roman Empire 284–602. A Social, Economic and Administrative Survey», 1964), որը որոշիչ դեր խաղաց նոր պատկերացումների ձևավորման մեջ:

XX դ. 80-ականներին հրատարակվեցին Ա. Ջիարդինոյի խմբագրած չորսհատորյակը («Societa' romana e impero tardoantico» ed. A. Giardina, 1986) և այլոց (A. Demandt «Die Spätantike: römische Geschichte von Diocletian bis Justinian 284–565 n. Chr.», 1989, «Nommes et ricbesses dans l'Empire byzantin I, IVᵉ–VIIᵉ siecle» ed. C. Morrisson and J. Lefort, 1989, «Storia di Roma, vol. VIII, L'Eta' tardoantica» ed. A. Carandini, L. Cracco Ruggini and A. Giardina, 1993) աշխատությունները: Այդ ժամանակաշրջանի եվրոպական պատմությանն էին նվիրված Օ. Սիկի, Ե. Շտեյնի և Ա. Պիգանիոլի (O. Seeck, E. Stein and A. Piganiol, 1993) հետազոտությունները: Ա. Ֆ. Լոսևի հիմնարար «Անտիկ էսթետիկայի պատմություն» բազմահատորյակի վերջին՝ յոթերորդ[16,17] և ութերորդ հատորներում[18] բազմակողմանի քննվում էր III–VI դդ. նոր պլատոնականությունը, գնոստիկությունը, վաղ քրիստոնեական էսթետիկան (փիլիսոփայությունը) և համոզիչ ձևով ցույց էր տրվում նրանց անքակտելի պատկանելությունը հին աշխարհակարգի վերջալույսին: 2008 թ. հրատարակված «Անտիկ փիլիսոփա-

յություն. հանրագիտական բառարան»-ը ներառում է V–VI դդ. անտիկ փիլիսոփաներին[8]:

1971–1992 թթ. սըր Առնոլդ Ջոնսի ընդհանուր խմբագրությամբ Cambridge University Press-ը հրատարակեց Prosopography of the Later Roman Empire (PLRE) եռահատոր աշխատությունը, որտեղ տրվում էին տեղեկություններ այն մարդկանց մասին, որոնք ապրում, կամ թվացյալ ապրում էին Հռոմեական աշխարհում 260–641 թթ., բացառությամբ հասարակ զինվորների, կրտսեր սպաների և պաշտոն չունեցող կամ ոչ փիլիսոփա քրիստոնյաների: Կասկածելի տեղեկությունների դեպքում հատուկ նշում էր կատարվում: Առաջին (260–395 թթ.) 1176-էջանոց հատորը հրատարակվեց 1971 թ., երկրորդ (395–527 թթ.) 1355-էջանոց հատորը հրատարակվեց 1980 թ., երրորդ (527–641 թթ.) 1626-էջանոց հատորը բաղկացած էր երկու մասից և հրատարակվեց 1992 թ.: 1972–1974 թթ. Տ. Բարնսը լրացրեց PLRE-ն նոր տեղեկություններով մի քանի տասնյակ մարդկանց մասին:

Ուշ անտիկ ժամանակաշրջանի ընկալումը որպես հնադարի վերջին՝ ավարտական փուլ, համընդհանուր ընդունվեց XX դ. վերջին: Հատկանշական է, որ նույն ժամանակաշրջանի փիլիսոփայությանը նվիրված 1967 թ. Ա. Հ. Արմսթրոնգի խմբագրած աշխատության անվանումն էր «Ուշ հունական և վաղ միջնադարյան փիլիսոփայության քեմբրիջյան պատմություն» (The The Cambridge History of Later Greek and Early Medieval Philosophy. Ed. A. H. Armstromg. Cambridge, 1967): Հատորը 2021 թ. թարգմանվել է ռուսերեն[14], սակայն նույն ժամանակաշրջանին նվիրված հաջորդ 40 տարիների մեծ առաջընթացը ամփոփող Լ. Պ. Գերսոնի խմբագրած աշխատության անվանումն արդեն արտացոլում էր պատմության նոր ընկալումը. «Ուշ հնադարի փիլիսոփայության քեմբրիջյան պատմություն» (The Cambridge History of Philosophy in Late Antiquity. Ed. L. P. Gerson. Vol. 1–2. Cambridge, 2010).

XX դ. վերջին պատմության պարբերականացման այս մոտեցումը այլևս չէր վիճարկվում և ամփոփված ձևով ներկայացվեց հեղինակավոր Քեմբրիջի անտիկ պատմության բազմահատորյա հրատարակության հետևյալ հատորներում՝ Cambridge Ancient History

v.13. The Late Empire 337-425[24] (1998 թ.) և Cambridge Ancient History v.14. Late Antiquity 425-600[25] (2000 թ.): Ռուսաստանում արժեքավոր հետազոտություններ կատարեցին Ի. Յու. Վասչենաև, Ե. Վ. Լիտովչենկոն և Պ. Պ. Շկարենկովը[11,12,15,23]:

Ուշ հնադարի երկրորդ կեսը այն ժամանակաշրջանն էր, երբ քրիստոնեական մտածելակերպը ոչ միայն սկսեց հաղթականորեն հետ մղել անտիկ ժամանակաշրջանը, այլև անդառնալիորեն փոխեց անտիկ աշխարհի մտածելակերպը. IV դարի երկրորդ կեսից մինչև VI դ. վերջը կամ VII դ. սկիզբը, ողջ Միջերկրածովքը և ընդարձակ հարակից տարածքները վերջնականորեն կերպարանափոխեցին: Եվրոպայում, Առաջավոր Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում տեղի ունեցավ մեծ տեղաշարժ՝ սկսվեց վաղ միջնադարը:

Հայկական պատմագրություն

Արդի հայկական պատմաբանության մեջ Հայաստանի հնադարից միջնադար անցման ժամանակի ընդունված տարեթվերը բավարար հիմնավորված չեն և լուրջ քննադատության չեն դիմանում: Այս իրողությունը մեր պատմաբաններին առանձնապես չի անհանգստացնում և չի դառնում գիտական քննարկման ու բանավեճերի առարկա:

1967–1984 թթ. ՀՍՍՀ ԳԱ-ն հրատարակեց «Հայ ժողովրդի պատմություն» (հավանաբար «Հայոց պատմություն» եզրույթը ցանկալի չէր կամ արգելված էր) ակադեմիական ութհատորյակը, որը հավակնում էր ամբողջացնելու մեր ժողովրդի անցած պատմական ուղին հնագույն ժամանակներից մինչև 1965 թ.: Ութհատորյակում տրված էր «Հայ ժողովրդի պատմության» հին և միջնադարյան փուլերի հետևյալ պարբերականացումը.

1-ին հատոր – Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և ստրկատիրական հասարակարգի ժամանակաշրջանում[2],

2-րդ հատոր – Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում (III–IX դդ.)[3],

3-րդ հատոր – Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում (IX–XIV դդ.),

4-րդ հատոր – Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում (XIV–XVIII դդ.):

Առաջին հատորում պատմության շարադրությունը հասցվում է մինչև 226/227 թ.՝ Սասանյանների հաղթանակը Իրանում: Այս ժամանակից, ըստ հեղինակների, Հայաստանում արագ զարգանում է ֆեոդալիզմը, և հայկական հնադարը ավարտվում է. սկսվում է վաղ միջնադարը: Պատկերը ֆանտաստիկ է հարևան տերություններում՝ Հին Հռոմում և Սասանյան Իրանում, 250–400 տարի դեռ տևելու էր հնադարը, իսկ իրենց ազդեցության ոլորտում գտնվող Հայաստանում արդեն միջնադար էր:

«Հայ ժողովրդի պատմության» երկրորդ հատորը հրատարակվել է 1984 թ., որտեղ հեղինակները պնդում էին, որ Հայաստանում ֆեոդալական հարաբերությունները ձևավորվել էին III–IV դդ.: Ներկայացված հիմնավորումները մտացածին էին և ճչացող, հակասության մեջ էին մտնում հասարակական ֆորմացիաների ձևավորման մարքսիստական և ոչ մարքսիստական[21] բոլոր տեսությունների հետ: Ֆեոդալիզմի էության մասին գոյություն ունի ստվար մարքսիստական և ոչ մարքսիստական գրականություն, որը թույլ է տալիս բավականին հստակ ձևակերպել նրա չափանիշները: Հայաստանի տնտեսական և մշակութային զարգացումը չէր կարող համեմատվել Հռոմեական կայսրության առաջատար կենտրոնների հետ, սակայն այնտեղ, ըստ հեղինակների, դեռ հնադար էր, իսկ մեզ մոտ արդեն միջնադար էր սկսվել: Աշխատության մակարդակը պատկերացնելու համար մեջբերում եմ կատարում երկրորդ հատորի առաջաբանից (էջ 13). «Հին աշխարհի մշակույթի հետ սինթեզված քրիստոնեական մշակույթի կենտրոնը աշխարհում V–VII դդ. մնում է Հայաստանը»: Այս ապշեցուցիչ անգրագետ հայտարարությունը նախընտրում եմ չմեկնաբանել:

2010-ից ՀՀ ԳԱԱ-ն հրատարակում է Հայոց պատմության երկրորդ ութհատորյակը (չորս կրկնակի հատորների տեսքով),

որոնցում ներկայացնում է Հայոց պատմության հետևյալ պարբերականացումը.

1-ին հատոր – Հին դարեր (Հին քարի դար – Ք.հ. III դար). Գիրք առաջին (Հին քարի դար – Ք.ա. X դար) – դեռ հրատարակված չէ:

1-ին հատոր – Հին դարեր (Հին քարի դար – Ք.հ. III դար). Գիրք երկրորդ (Ք.ա. IX դար – Ք.հ. III դար)[4]:

2-րդ հատոր – Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես). Գիրք առաջին (IV դարի սկիզբ – IX դարի կես, կամ 301–855 թթ.)[5]:

2-րդ հատոր – Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես). Գիրք երկրորդ (IX դարի կես – XVII դարի առաջին կես):

Այստեղ հայոց միջնադարը պայմանականորեն սկսվում է 301 թ.՝ Մեծ Հայքում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու տարեթվից, այսինքն՝ հայ գիտնականների նախկին պատկերացումները անփոփոխ են. Հռոմեական կայսրությունում և Պարսից տերությունում ավելի քան երկու դար դեռ տևելու է հնադարը, երբ իրենց մեջ ընկած, մասամբ իրենցով կառավարվող Մեծ Հայքի թագավորությունում արդեն միջնադար է: Գրքում նշվում է, որ III դ. առաջին քառորդից մինչև IV դ. 30-ական թթ. մեր երկրում զարգանում են ավատատիրական հարաբերությունները: Հռոմեական կայսրությունում զարգանում էր կոլոնատը, սակայն դա հիմք չի հանդիսանում հայտարարելու միջնադարի սկզբի մասին: Մարքսիստական պատմագրությունը խոսում էր ստրկատիրական հասարակության ճգնաժամի և արտադրության նոր ձևերի որոնման մասին: Արդի պատմագրությունը հստակեցրել և ընդհանրապես էականորոն վերանայել է ստրուկների աշխատանքի վրա հիմնված արտադրության դերը հին, այդ թվում՝ անտիկ՝ հունական և հռոմեական հասարակություններում:

Տասնամյակներ շարունակ այս պարբերականացման սխեման նստած է մեր՝ հայաստանյան հասարակության գիտակցության մեջ և զարմանալիորեն չի արժանանում ոչ մի քննադատության: Պատմության պարբերականացման խնդիրները շրջանցում են նույնիսկ մեր ամենաառաջադեմ մասնագետները[6,7]: Այսպես անվերջ շարու-

նակվել չի կարող՝ փոփոխությունները անխուսափելի են: Անհրաժեշտ է հստակեցնել հայոց հնադարից միջնադար անցման տարեթվերը և անցնել նոր պարբերականացման:

Հայաստանը IV–VII դարերում

Մշակութային, տնտեսական, ռազմաքաղաքական տեսանկյուններից IV–VII դարերի Հայաստանը հին աշխարհի ոչ թե անկյունաքարային, այլ շատ ավելի համեստ տեղ զբաղեցնող երկիր էր: Դրա հետ մեկտեղ, իր տարածքի մեծությամբ, աշխարհաքաղաքական դիրքով և ռազմական ուժով նա հարևան աշխարհակալությունների համար որոշակի, երբեմն կարևոր դեր էր կատարում:

Մեկ անգամ ևս հաստատենք, որ Հայաստանը ավելի քան վեց դար՝ I մ.թ.ա. երկրորդ կեսից մինչև VII դ. կեսը, գտնվում էր իր հզոր հարևանների՝ Հռոմեական և Իրանական (Պարթևական և Սասանյան) տերությունների ազդեցության ոլորտում, երբեմն էլ ուղղակի ենթարկվում էր նրանց: Այդ ազդեցությունը միայն ռազմաքաղաքական ոլորտով չէր սահմանափակվում. այն ներառում էր նաև տնտեսական, մշակութային, կրոնական ոլորտները: IV դ. սկզբին Տրդատ Գ Մեծը Հայաստանում հաստատեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, որով լուծեց կարևորագույն քաղաքական և կրոնահոգեբանական խնդիր՝ վերացրեց հռոմեական կայսեր կողմից հայոց արքային իշխանություն շնորհելու ստորացուցիչ կարգը: Հայոց արքայի իշխանական իրավունքը կրկին դարձավ աստվածատուր և հավասար հռոմեական կայսրի ու իրանական շահնշահի աստվածատուր իրավունքին[6] (6):

Մեծ Հայքի նման մեծ պետությունը չէր կարող գոյություն ունենալ առանց արքունական դիվանի, քրմական և տնտեսական գրառումների, առևտրական պարտավորությունների թղթերի և հարևան երկրներից ներկրած գրականության: Այս ժառանգությունը մեզ փաստորեն չի հասել, այսինքն՝ նա կամ ոչնչացվել է, կա՛մ մոռացության մատնվել ու կորսվել:

Երկրի համար Հայոց դարձը ուղեկցվեց մեծ մշակութային աղետներով. հասարակության ներքին պառակտումով, սուր, երբեմն զինված պայքարով, կրոնական հին կառույցների զգալի մասի կործանումով, տաճարային դպրության և հսկայական մշակութային շերտի ոչնչացումով: Հայաստան հրավիրված և հովանավորված հարյուրավոր մոլեռանդ, երբեմն պարզապես ագահ այլազգի քրիստոնյաները անխնա ոչնչացրին երկրի մտավոր մշակույթի, հատկապես գրավոր մշակույթի ստվար մասը: Մովսես Խորենացու հեղինակավոր վկայությամբ, V դ. երկրորդ կեսին Հայաստանում արդեն չէր պահպանվել նախորդ ժամանակաշրջանի ոչ մի գրավոր նյութ: Սակայն նոր կրոնը հիմնված էր Սուրբ գրքի վրա, որը Հայաստանում տարածվում էր թարգմանվելով հունարենից և ասորերենից, ինչը առաջացրեց սեփական գրի անհրաժեշտության սուր պահանջ: Երբ այդ պահանջը դարձավ նաև քաղաքական՝ դավանաբանական որոշ հարցերով հայոց պետությունը և եկեղեցին հակադրվեցին հունա-հռոմեականին, իսկ պարսից արքունիքը, որը ուշի ուշով հետևում էր հայ-հունական այս վեճերին, իր համար օգտակար համարեց սեփական գիր ունենալու հայերի մղումը, և IV դ. վերջում (393 թ.) կամ V դ. սկզբին (405 թ.) Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթևի օժանդակությամբ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը:

Գրագիտությունը աննախադեպ արագությամբ տարածվում է Հայաստանի պարսկական և հռոմեական հատվածներում: Ավելին, ստեղծվում է կրոնական, մշակութային և գիտական գրականության թարգմանության ընդարձակ ծրագիր, որը հաջողությամբ իրագործվում է, և արդեն V դ. մինչև VII դ. կեսերը գրվում և թարգմանվում են այնպիսի ստեղծագործություններ, որոնք լրիվ փոխում են հայկական մտավոր միջավայրը. այն հունա-, ասորա- և պահլավերենա-լեզվականից դառնում է գերազանցապես հայկական: Այս ամենը տեղի է ունենում ուշ հնադարյան՝ անտիկ Հայաստանում: Հայկական գրականությունը գերազանցապես գրում են հոգևորականները: Միակ բացառություններն են Դավիթ Անհաղթը և Անանիա Շիրակացին: Պատմագրությունը բացառապես եկեղեցական դաստիարակություն ստացած գործիչների մենաշնորհն էր: Այստեղ առանձնանում է Մով-

սես Խորենացին, որը որոշակի մեթոդ օգտագործող լուրջ գիտնական էր:

V դ. վերջից մինչև VII դ. կեսերը քրիստոնեությունը հայ ժողովրդի կողմից դանդաղորեն, սակայն անդառնալիորեն, վերջնականապես, ընդունվում է և ընկալվում է որպես ազգային կրոն: Վերջնականապես ազգայնանում է եկեղեցական դասը: 554 թ. մարտի 29-ին Դվինում հավաքված եկեղեցական ժողովը դատապարտում է քաղկեդոնական հավատը և ի վերջո խզում կապերը բյուզանդական «տիեզերական» եկեղեցու հետ: Պարսկական տերությունը հաշվի է առնում այդ իրողությունը, այլևս չհետապնդելով հայերին քրիստոնեական կրոնը դավանելու համար: Խոսրով Անուշիրվան շահնշահը արժանանում է հայերի մեծ հարգանքին: Հուստինիանոս կայսրը ի պատասխան խստացնում է ոչ միայն Հայաստանի արևելահռոմեական հատվածի վարչա-տնտեսական քաղաքականությունը, այլև որոշակի կրոնական ճնշումներ է սկսում:

VI դ. վերջին և VII դ. կեսերին հայ միտքը մոռանում է նախորդ Արտաշեսյաններին, իսկ վաղ Արշակունյաց արքաների ժամանակաշրջանը հիշվում է միայն Մովսես Խորենացու աղոտ, ոչ ստույգ պատմությունների հիման վրա: Սեփական անցյալը դիտվում է հիմնականում աստվածաշնչյան և որոշ, գերազանցապես քրիստոնեական հունա-հռոմեական գրողների երկերի հիման վրա: Հայերի մեջ հին աշխարհիկ և հեթանոսական, կամ զրահադաշտական մտածելակերպը վերջնականապես փոխվում է վաղ միջնադարյան քրիստոնեականի: Հայաստանում այս գործընթացները ընթանում են յուրովի, սակայն հիմնականում համապատասխանում են իր հզորությունը գրեթե վերականգնած Արևելահռոմեական կայսրությունում և մի քանի կիսանկախ կամ անկախությունը պահպանած ծայրամասային «բարբարոսական» թագավորություններում տեղի ունեցող գործընթացներին: VI դ. վերջին և VII դ. կեսերին հունա-հռոմեական քաղաքակրթության ողջ հսկայական տարածաշրջանը վերջնականորեն թևակոխում է պատմության նոր՝ միջնադարյան, ավելի ճիշտ՝ վաղ միջնադարյան՝ քրիստոնեական փուլը: Այսպիսով՝ հայոց պատմության ընթացքը մեկուսացված չէ, այն համընթաց է Միջերկրածովքում և Իրանում կատարվող գործընթացներին և համաշխարհային պատմության անօտարելի մասն է:

Այսպիսով, V–VII դարերի Հայաստանում ձեռնարկվում և իրականացվում է մեծ մշակութային ծրագիր. ստեղծված հայոց գիրը և դպրությունը, թարգմանական և սեփական գրականությունը, բուռն քաղաքական և ռազմաքաղաքական իրադարձությունները պատկանում են ոչ թե վաղ միջնադարյան, այլ ուշ հնադարյան Հայաստանի պատմությանը:

636 թ. Յարմուք գետի ափին արաբները պարտության են մատնում բյուզանդացիներին և գրավում կայսրության հսկայական տարածքները: 641-ից սկսած այդ նվաճումները փոխում են Արևելյան Միջերկրածովքի պատկերը. վերջանում է արևելահռոմեական հնադարը: 655 թ. Սասանյան տերությունը կործանվում է արաբների ձեռքով, և հաղթական իսլամը ամենադաժան ձևով սկսում է հաստատվել Իրանի նվաճված տարածքում. վերջանում է իրանական հնադարը: 639-ից սկսվում են արաբական արշավանքները Հայաստան, բյուզանդական և սասանյան գերիշխանության լծակները խիստ թուլանում են: 652 թ. Թեոդորոս Ռշտունին, հիմնվելով իր հաղթանակների վրա, Մուավիա խալիֆայի հետ պայմանագիր է կնքում և Մարզպանական Հայաստանը դառնում է կիսանկախ՝ Տանուտերական Հայաստան. վերջանում է հայոց հնադարը:

Հետաքրքիր զարգացումներ են տեղի ունենում նաև Հնդկաստանում և Չինաստանում: Մի քանի տասնամյակների տարբերությամբ, այս քաղաքակրթությունները ևս թևակոխում են մի նոր փուլ, որը պայմանական կարելի է որակել որպես միջնադարյան: Այս գործընթացներից դուրս են մնում միայն մի քանի լոկալ, մեկուսացված փոքր քաղաքակրթություններ, որոնք որոշ ուշացումով և հարևանների ազդեցության տակ ևս թևակոխում են միջնադարի շեմը:

Հնդկաստանում VII դ. կեսին Պութպաբհուտի թագավորության կառավարիչ Հարշան ենթարկում է Գաուդա և Մաուքհարիների թագավորությունները և ժամանակավորապես միավորում Հյուսիսային Հնդկաստանը. վերջանում է հնդկական հնադարը[9]:

581 թ. Սույ դինաստիան վերջնականապես միավորում է Չինաստանը, որին 618 թ. հաջորդում է հզորագույն Տան դինաստիան. վերջանում է չինական հնադարը[19]: VII դ.-ից սկսվում է Ճապոնիայի միջնադարը[20]: Այսպիսով, VII դարում Եվրասիայի և Հյուսիսային Աֆրիկայի մեծագույն մասը թևակոխում է միջնադարի ժամանակաշրջանը:

Վերը շարադրվածի հիման վրա կարող ենք հայոց պատմության պարբերականացման մեջ որոշակի փոփոխություն մտցնել՝ ավելացնել ուշ հնադարը (Late Antiquity), որով հնադարի պարբերականացումը կստանա հետևյալ տեսքը.

- Ք.ա. XXV դ. – Ք.ա. X դ.՝ վաղ հնադար,
- Ք.ա. IX դ. – 293 թ. դասական հնադար,
- 293–602/652 թթ. ուշ հնադար:

Նաև առաջարկում եմ քննարկել հայոց հնադարի ավելի մանրամասն պարբերականացման տարբերակ.

- Նախնադար՝ մոտ 2 մլն տ. մ.թ.ա. - XXV դ. մ.թ.ա.

Վաղ հնադար.

- XXIV–XV դդ. հնագույն փոքր պետություններ Հայաստանում (Հայկական լեռնաշխարհում),
- XV–XIII դդ. Հայասա թագավորություն (Հին Հայք),
- XIII–X դդ. փոքր թագավորությունների Նաիրի միություն:

Դասական հնադար (դասական անտիկ ժամանակաշրջան).

- IX–VI դդ. Ուրարտու (Վանի թագավորություն՝ Բիայնիլի) տերություն,
- 590–550/535 թթ. Վաղ Երվանդունիներ,
- 550/535–331 թթ. Աքեմենյան տիրապետություն,
- 331–201 թթ. Ուշ Երվանդունիներ (Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք)
- 201/189 թ. մ.թ.ա. – 54 թ. Արտաշեսյաններ,
- 54 – 293 թթ. Արշակունիներ:

Ուշ հնադար (ուշ անտիկ ժամանակաշրջան).

- 293–428 թթ. Արշակունիներ,
- 428–602/652 թթ. արևելահռոմեական և սասանյան տիրապետություն (Մարզպանական Հայաստան):

Այսպիսով՝ Հայաստանում (Հայկական լեռնաշխարհում) հնադարը հաջորդել է մոտ 2 մլն տարի տևած նախնադարին և տևել է ավելի քան 3000 տարի:

Ինչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել

Հայաստանի պատմության հնադար–միջնադար պարբերականացման բարեփոխումը նախապես պետք է քննարկվի գիտական շրջանակներում: Պատմաբաններ, հնագետներ, ազգագրագետներ, մշակութաբաններ, փիլիսոփաներ՝ բոլորի կարծիքը արժեքավոր է: Բազմաթիվ ճշտումներից և հայեցակարգի հստակեցումից բացի՝ այս ամենը կնպաստի նոր գաղափարների յուրացմանը նախ՝ գիտական, ապա՝ ուսանողական և լայն հասարակության շրջանակներում:

Գիտության զարգացումն ու տարածումը պատմագրության բնագավառում նույնպես ունի իր օրինաչափությունները: Նոր գաղափարների յուրացումը, որպես օրենք, անցնում է հետևյալ ճանապարհը. 1. գիտական հոդվածներ և մենագրություններ, 2. ակադեմիական հրատարակություններ, 3. բուհական դասագրքեր, 4. դպրոցական դասագրքեր: Նոր գիտական տվյալները հստակեցվում և բյուրեղացվում են, որի ամենաբարձր և հավաստի աստիճանն է դպրոցական դասագիրքը: Այս ամենն ընթանում է գիտական հանրության պարտադիր քննարկումներով, առանց որի դժվար է ապահովել բարձր գիտական մակարդակ:

ՀՀ ԳԱԱ պատմության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության, մանկավարժական ինստիտուտները, Երևանի պետական համալսարանի և այլ բուհերի մասնագետները պետք է մասնակցեն այս քննարկումներին:

Եզրակացություն

Հայաստանի պատմության հնադար–միջնադար սահմանազատման նոր հայեցակարգի ընդունումը ուշ հնադարի ծիրում է դիտում

մեր ազգային ինքնագիտակցության անկյունաքարային պատմական իրադարձությունները: Մենք ընդունել ենք քրիստոնեությունը, ստեղծել ենք գրերը, մտել ենք սեփական մշակութային ժառանգություն ունեցող ազգերի շարքը ուշ հնադարում:

Վերջում առաջարկում եմ հայոց պատմության ընդհանուր պարբերականացման հետևյալ սխեման.

- մոտ 2 մլն տ. մ.թ.ա. - XXV դ. մ.թ.ա. Նախնադար,
- XXV դ. մ.թ.ա. - 602/652 թ. Հնադար,
- 639/652–1677 թթ. Միջնադար,
- 1677–2024 թթ. Նոր դար, որից 1918–2024 թթ. Նորագույն պատմություն:

Այսպիսով՝ Հայոց պատմության հնադարի տևողությունը համապատասխանում է հունա-հռոմեական և իրանական քաղաքակրթությունների ուշ հնադարի (Late Antiquity) տևողությանը և վերջացել է մոտավորապես VII դ. սկզբին կամ կեսերին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Ա. Մ. Հին Հայաստանի պատմության բազմահատորյակի նախագիծ. - Եր.: «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2011. - 36 էջ:
2. Հայ ժողովրդի պատմություն. Հատոր I. Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում. - Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1971. - 992 էջ:
3. Հայ ժողովրդի պատմություն. Հատոր II. Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում. - Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984. - 692 էջ:
4. Հայոց պատմություն. Հատոր I. Հին դարեր (Հին քարի դար – Ք.հ. III դար). Գիրք երկրորդ (Ք.ա. IX դար – Ք.հ. III դար). - Եր.: «Զանգակ» հրատարակչություն, 2024. - 698 էջ + 24 էջ ներդիր:
5. Հայոց պատմություն. Հատոր II. Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես). Գիրք առաջին (IV դարի սկիզբ – IX դարի կես). - Եր.: «Զանգակ» հրատարակչություն, 2018. - 704 էջ + 24 էջ ներդիր:
6. Մանասերյան Ռ. Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ. - Եր.: «Արեգ», 1997. - 216 էջ:
7. Մելիքյան Արթուր. Մեծ Հայքի թագավորության պարսկահռոմեական բաժանումները III-IV դդ. (պատ. գիտ. թեկն. ատենախոսություն, 15.01.2008 թ.):
8. Античная философия: Энциклопедический словарь. Пред. ред. колл. П. П. Гайденко. - М.: Прогресс-Традиция, 2008. - 896 с.
9. Антонова К. А., Бонгард-Левин Г. М., Котовский Г. Г. История Индии. Издание 2-е, исправленное и дополненное. - М.: Издательство «Мысль», 1979. - 608 с.
10. Браун Питер. Мир поздней античности: 150–750 гг. н.э. Пер. с англ. Воронцова С. А., Биркина М. Ю., Решиковой Р. Ю. - М.: Издательство «Новое литературное обозрение», 2024. - 256 с.

(Серия «Studia Religiosa»). (թարգմանված է Peter Brown «The World of Late Antiquity: 150–750», 1971).
11. Ващева, И. Ю. Концепция поздней античности в современной исторический науке. - Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского, 2009, No 6 (1), с. 220–231.
12. Ващева, И. Ю. Феномен «церковных историй» в эпоху поздней античности. - Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук. - Белгород, 2013. - 47 с.
13. Джонс А. Х. М. Гибель античного мира. Пер. с англ. - Ростов-на-Дону, Изд-во «Феникс», 1997. - 576 с.
14. Кембриджская история поздней греческой и ранней средневековой философии. Под ред. А. Х. Армстронга. Пер. с англ. Шапошникова Ю. В., Львов А. А. Вступ. статья В. В. Прокопенко. - СПб.: Издательство «Владимир Даль», 2021. - 808 с. (Серия «Слово о сущем», том 127).
15. Литовченко, Е. В. Позднеантичная эпистолография в контексте медиевализации и культурного континуитета на латинском Западе (IV–VI вв.). - Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук. - Белгород, 2021. - 51 с.
16. Лосев, А. Ф. История античной эстетики. Последние века. Книга I. - Харьков: Фолио; М.: ООО «Издательство АСТ», 2000. - 512 с. (Вершины человеческой мысли).
17. Лосев, А. Ф. История античной эстетики. Последние века. Книга II. - Харьков: Фолио; М.: ООО «Издательство АСТ», 2000. - 544 с. (Вершины человеческой мысли).
18. Лосев, А. Ф. История античной эстетики. Итоги тысячелетнего развития. Книга I. - Харьков: Фолио; М.: ООО «Издательство АСТ», 2000. - 832 с. (Вершины человеческой мысли).
19. Малявин, В. В. Китайская цивилизация. - М.: «Издательство Астрель», «Фирма «Издательство АСТ», Издательско-продюссерский центр «Дизайн. Информация. Картография», 2000. - 632 с., ил., карт.

20. Пасков, С. С. Япония в раннее средневековье: VII–XII века (Исторические очерки). - М.: Издательство «Наука», Главная редакция восточной литературы, 1987. - 200 с.
21. Семенов, Ю. И. Философия истории: Общая теория, основные проблемы и концепции от древности до наших дней. - М.: «Современные тетради», 2003. - 776 с.
22. Хэлдон, Джон. История византийских войн. Пер. с англ. - М.: «Вече», 2007. - 464 с.: ил. - (Terra Historica).
23. Шкаренков, П. П. Образ власти на рубеже античности и средневековья: от империи к варварским королевствам. - Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук. - Москва, 2009. - 52 с.
24. The Cambridge Ancient History. Vol. XIII. The Late Empire, A. D. 337–425. Ed. A. Cameron, P. Garnsey. - Cambridge University Press, 2008. - 16 + 845 p.
25. The Cambridge Ancient History. Vol. XIV. The Late Antiquity: Empire and Successors, A. D. 425–600. Ed. A. Cameron, B. Ward-Perkins, M. Whitby. - Cambridge University Press, 2008. - 16 + 1101 p.

РЕЗЮМЕ

НОВАЯ ПЕРИОДИЗАЦИЯ ДРЕВНОСТИ И СРЕДНЕВЕКОВЬЯ В АРМЯНСКОЙ ИСТОРИИ

Рассматривается предложенная в 1964 г. A. H. M. Jones концепция «поздней античности» (The Late Antiquity), которая после всестороннего обсуждения, получила всеобщее признание ученых в самом начале XXI века. В результате этого, IV–VI вв., а некоторыми исследователями и первая половина VII в. были признаны своеобразной частью древнего мира — поздней античностью, предшествующей переходу к раннему средневековью.

Армянская историография в 1980-х годах концом древней истории Армении считала 226-228 гг н.э. В 2010–2024 гг. условной датой окончания древней истории она приняла 301 г. - дату христинианизации Армении. Обе даты ничем не обоснованы, крайне субъективны и не выдерживают никакой научной критики.

В статье предлагается и обосновывается новая периодизация истории Армении:

- около 2 млн. лет до р.Х. - XXV в. до р.Х. - предистория,
- XXV в. до р.Х. – X в. до р.Х. – ранняя древность,
- IX в. до р.Х. — 293 г. р.Х. — классическая древность (античность),
- 293–602/652 гг. - поздняя древность (античность).

С позиции новой периодизации истории Армении кратко перечисляются краеугольные моменты ее истории. Параллельно приводятся сравнения с периодизацией истории Европы, Передней Азии, Индии и Китая.

В конце приводится возможная схема обсуждения и принятия новой периодизации истории.

ABSTRACT

NEW PERIODIZATION OF THE ANTIQUITY AND MEDIEVAL ARMENIAN HISTORY

The concept of the "Late Antiquity" proposed by A. H. M. Jones in 1964 is considered, which, after a comprehensive discussion, received general recognition from scholars in the early XXI century. As a result, IV-VI centuries were defined as the Late Antiquity, a unique part of the ancient world preceding the transition to the early Middle Ages. Some researchers suggest including the first half of VII century in this definition as well.

In the 1980s, Armenian historiographers considered 226-228 CE to be the end of ancient history of Armenia. In 2010-2024, they adopted 301 CE, the year of Christianization of Armenia, as the conditional date for the end of ancient history. Both dates are not substantiated in any way, seem to be rather subjective and do not stand any scientific criticism.

The author proposes and rationalizes a new periodization of the history of Armenia:

- about 2 million years BCE - XXV century BCE - Prehistory,
- XXV century BCE - X century BCE - Early Antiquity,
- IX century BCE - 293 CE - Classical Antiquity (antiquity)

293 – 602/652 - Late Antiquity (antiquity).

In light of the new periodization of the history of Armenia, the cornerstones of its history are briefly listed. In parallel, the author makes comparisons with the periodization of the history of Europe, Western Asia, India and China. At the end, a possible discussion and adoption outline of the new periodization of history is suggested.

Հոդված 2.

ԿԱՏԱՖՐԱԿՏՆԵՐ. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԳԵՐԾԱՆԸ ՀԵԾԵԼԱԶՈՐԸ. ՄԱՍ 1. Ք.Ա. II–I ԴԴ.

Բանալի բառեր՝ *Պարթևստան, Հայաստան, Հին Հռոմ, ծանր հեծելազոր, կատաֆրակտներ, կլիբանարներ, զորատեսակի սպառազինությունը, մարտավարությունը, որոշ ճակատամարտեր, համաշխարհային ռազմարվեստ:*

Նախաբան

Կատաֆրակտը (հին հունարեն κατάφρακτος – «զրահապատ») անտիկ ժամանակաշրջանի մասնագիտացված ծանր հեծելազորն էր: Արդի պատմագրությունում կատաֆրակտ են անվանում պարթևական (նաև հայկական և սարմատական) ծանր այրուձին: Հռոմեական և վաղ բյուզանդական ծանր այրուձիու մասին ընդունված է կիրառել կատաֆրակտոսներ անվանումը: Ա. Վ. Բաննիկովը[10,11], հաշվի առնելով կատաֆրակտների գերծանր սպառազինությունը և հատուկ մարտավարությունը, դրանք անվանում է գերծանր այրուձի: Այս անվանումը համապատասխանում է զորատեսակի բնույթին և ընդունվում է մեր կողմից:

Զրահապատ հեծելազորի առանձին ջոկատներ ասորեստանյան բանակում հայտնվում են դեռ Ք.ա. VII դ.[29]: Հավանաբար նման ջոկատներ կարող էին ստեղծվել նաև ուրարտական բանակում: Աքեմենյան բանակում նույնպես կային զրահապատ հեծելազորի ջոկատներ[30,40]: Հունաստանում ամենալավը համարվող թեսալական այրուձիու մի մասը ևս զրահապատ էր[17,28]: Որպես առանձին զորատեսակ՝ Մակեդոնիայում ծանր՝ զրահապատ այրուձիու ընտիր զորագնդեր առաջինը ստեղծեց Փիլիպպոս արքան, ապա կատարելագործեց որդին՝ Ալեքսանդր Մակեդոնացին[17]: Սելևկյան Անտիոքոս Գ Մեծը ուներ ծանր հեծելազորի ընտիր գունդ[13,14], երբեմն էլ օգտագործում էր իր ենթակայության տակ գտնվող իրանական քոչվորների կատաֆրակտների ջոկատները[13]:

Իրանալեզու քոչվոր ցեղերի հեծելազորում առանձին զրահապատ հեծելազորի ջոկատները նշմարվում են Ք.ա. VI-V դ.[12,21,27,33]: Կենտրոնական Ասիայից մինչև հյուսիսսևծովյան տափաստաններ ու Դանուբ գետ ապրող բոլոր քոչվոր ցեղերը և ցեղախմբերը անընդհատ պատերազմի մեջ էին միմյանց և հարևանների հետ: Ուժեղները հպատակեցնում էին թույլերին, հազվադեպ դեպքերում նաև ոչնչացնում: Բոլոր հարևան երկրագործական երկրները ենթարկվում էին մշտական ասպատակությունների: Այս պայմաններում կատարելագործվեցին թե՛ ձեռնամարտը, թե՛ հեռահար հեծելամարտը: Ձեռնամարտում սկյութների, հետագայում՝ սարմատների, դահերի և այլ ցեղախմբերի այն հեծյալները, որոնք զրահապատ էին, սկսեցին գրոհել առաջին շարքերում, իրենց հետևից տանելով զրահով չպաշտպանված ազգակիցներին, դրանով ուժեղացնելով հարվածի ուժը: Հաջորդ քայլը զրահապատ հեծելազորի առանձին ջոկատների կազմակերպումն էր: Հարվածը ուժեղացնելու տրամաբանությունը ծանրացրեց զրահը և, ամենակարևորը, երկարացրեց ու ծանրացրեց նիզակը: Ասպանդակների բացակայության պայմաններում ծանր նիզակը ձեռքին, հակառակորդի վրա ձիով սլանալ և հարվածի ժամանակ հավասարակշռությունը պահպանելը գրեթե անհնար էր: Դրությունը բարելավվեց, երբ փոխվեց թամբի կառուցվածքը[27,36] և դեն նետվեց վահանը: Բարձր թամբակեռներով թամբից արդեն կարելի էր հուսալիորեն հարվածել ծանր նիզակով և ցած չգլորվել: Ձիուց չընկնելու համար պահանջվում էր ոչ միայն վարպետություն, այլև մեծ ֆիզիկական ուժ ու դիմացկունություն: Ուժեղ հարվածից հետո հեծյալը, որպես օրենք, պետք է բաց թողներ նիզակը, որ ձիու թափից ինքը գետնին չտապալվեր: Ձեռնամարտը շարունակելու համար ձիավորը զինվում էր մեծ դաշույնով, թրով կամ սրով: Շուտով մնաց միայն երկարացված թուրը կամ սուրը, որն ավելի էր համապատասխանում հեծյալի ձեռնամարտին: Հեռահար մարտ վարելու հնարավորությունը չկորցնելու համար հեծյալը պահպանեց նետ ու

աղեղը: Սպառազինության վերջին տարրը ձիուն զրահապատ ծածկոցով պաշտպանելն էր: Սովորականից ծանր սպառազինությունը մեծ առավելություն էր տալիս առաջին հարվածի ժամանակ և դրան հետևող ձեռնամարտում, սակայն սահմանափակում էր հեծյալի շարժունակությունը: Գերծանր հեծելազորի ջոկատներին սկսեցին ուղեկցել հեծյալ նետաձիգների ջոկատները: Երբ Ք.ա. IV դ. քոչվորները բախվեցին գերազանց կազմակերպված հունական և մակեդոնական բանակների հետ, ապա նրանց թեթև հեծելազորը պարբերաբար սկսեց պարտվել փաղանգին և զրահապատ այրուձիուն: Հունա-մակեդոնական ռազմական համակարգին դիմակայելու համար իրանական աշխարհը մշակեց իր ուրույն, հիմնականում հեծյալ մարտավարությունը:

Երվանդունիների և Արտաշես Ա արքայի օրոք հայերը հավանաբար արդեն ունեին զրահապատ հեծելազոր: Արտաշես Ա-ի մոտ հյուրընկալվող հռչակավոր Հաննիբալ Բարկան հեծելամարտի լավ գիտակ էր: Հայերը իրանական հեծյալ մարտավարությանը կարող էին ծանոթանալ նաև Հյուսիսային Կովկասի քոչվորների հետ շփումների ժամանակ: Ք.ա. 113-112 թթ. հայ-պարթևական պատերազմը առաջին լուրջ ընդհարումն էր արևելյան հեծյալ մարտավարությանը գերազանց տիրապետող պարթևների հետ: Հայերը մեծ դժվարությամբ հետ մղեցին պարթևներին (մեծ նշանակություն ունեցան երկրի ամրոցները[1]), սակայն մարտերից մեկում գերվեց թագաժառանգ Տիգրանը[1]: Պարթևական արքունիքում անցկացված 16 տարիների ընթացքում Տիգրանը խորապես ուսումնասիրեց պարթևական հեծյալ մարտավարության բոլոր նրբությունները: Ք.ա. 95 թ. Տիգրանը բազմեց Մեծ Հայքի գահին և շուտով սկսեց հայկական բանակի ռեֆորմը, որի ամենակարևոր մասը հայկական հեծելազորի արմատական բարելավումն էր: Կատաֆրակտների գնդերը դարձան հայկական բանակի գլխավոր հարվածային ուժը, հսկայական դեր խաղացին Տիգրան Մեծի վարած պատերազմներում[1,2,3,8] և Մեծ Հայքում ծավալված ռազմաքաղաքական իրադարձություններում[7]:

Կատաֆրակտների գնդերի կազմակերպումը, սպառազինությունը և մարտավարությունը

Կատաֆրակտների զորամասերը կազմակերպված էին Առաջավոր Ասիայում լայնորեն ընդունված տասնորդական համակարգով: Պարթևների մոտ 100 ձիավորը անվանում էին վաշտ, 1000 ձիավորը՝ դրոշ, իսկ 10000 ձիավորից բաղկացած զորամիավորումը անվանում էին գունդ[24,30]: Հայերի մոտ նույնպես միավորը սկսվում է 10-ից՝ 10 ձիավորը անվանվում էր ջոկ, 50 հեծյալ զինվորը՝ դաս, 100 ձիավորը՝ վաշտ, 1000 ձիավորը՝ գունդ կամ դրոշ, 10000 ձիավորը՝ բյուր կամ մեծ գունդ: Զորամասերում զինվորների նշված քանակները ոչ միշտ էին պահպանվում: Հավանաբար 500-ից ավելի զորամասը շարունակում էր անվանվել դրոշ (հայերի մոտ՝ նաև գունդ), պակասը՝ վաշտ: Գունդն և բյուրը ունեին օժանդակ ստորաբաժանումներ և, ըստ երևույթին, նաև հեծյալ գումակ[1]: Կատաֆրակտներին միշտ ուղեկցում էին նետաձիգների հեծելավաշտերը կամ հեծելագնդերը, որոնք ապահովում էին նրանց հետախուզական, ռազմերթի պահպանողական, իսկ հակառակորդի երկրում՝ նաև մատակարարման խնդիրները:

Սպառազինության նկարագրությունը

Կատաֆրակտները պաշտպանված էին ծանր ճոշավոր, թիթեղապատ կամ կոմբինացված զրահով, երբ ճոշավոր զրահը կրծքին ուժեղացված էր խոշոր ուղղաձիգ թիթեղներով: Այս զրահի անվանումից է գալիս կատաֆրակտների հայերեն անվանումը՝ ճոշավոր այրուձի[1,8]: Սաղավարտը ուներ մետաղյա դիմակ, որը պաշտպանում էր դեմքը: Ձեռքերը պաշտպանված էին բազկապանակներով: Ք.ա. II-I դդ. կատաֆրակտների զինվորների ազդրերը դեռ պաշտպանված չէին զրահով, այդ պատճառով Լուկուլլուսը Տիգրանակերտի ճակատամարտի ժամանակ խորհուրդ էր տալիս իր զինվորներին խոցել հայ կատաֆրակտների անպաշտպան ազդրերը: Հետագա-

յում այդ թերությունը վերացվեց, և կատաֆրակտները դարձան գրեթե անխոցելի: Երբեմն ձեռքերը և ոտքերը պաշտպանում էին կաշվե բազկա-, ազդրա- և սրունքապանակներով[24,30]: Զրահապատ, երբեմն ճոշավոր ծածկոցով պաշտպանում էին ոչ միայն ձիու մարմինը, այլև հատուկ դիմակով պաշտպանում էին գլուխը: Հեծյալի և ձիու զրահը պատկառելի ծանրություն էր, այդ պատճառով ընտրվում էին ձիերի խոշոր, ուժեղ և դիմացկուն տեսակներ: Այդպիսի ձիեր կային ինչպես Պարթևստանում՝ հռչակավոր նիսեյական ձիերը, այնպես էլ Հայաստանում[1]:

Կատաֆրակտները զինված էին հսկայական ծանր նիզակով՝ կոնտոսով (հին հունարեն κοντός, որից լատ. contus), որի երկարությունը հասնում էր 4-4,5 մ: Կոնտոսի հետևի մասը ծանրացնում էին, որ հավասարակշռեն առջևի երկար մասը: Ծանրացած կոնտոսի հարվածային ուժը ավելի էր մեծանում իներցիայի հաշվին: Անտիկ պատմիչները վկայում էին, որ այդպիսի ծանր նիզակը մեկ հարվածով կարող էր երկու հոգու խոցել: Արդի որոշ պատմաբանների և ռեկոնստրուկտորների հաշվարկով՝ կոնտոսով հարվածի ուժը մոտավորապես 500 կգ[24,38,39] էր: Կոնտոսը հավանաբար պահում էին մի ձեռքով, մյուսով կառավարում ձիուն, սակայն վերլուծաբանների մեջ կան երկու ձեռքով բռնելու, այսպես կոչված, «սարմատական ձևի» որոշ կողմնակիցներ: Վերջինս խիստ կասկածելի է, որովհետև արդի վերականգնումները (ռեկոնստրուկցիաները) չեն պատասխանում այն հարցին, թե ինչպես է ձիավորը հարվածից հետո պահպանել հավասարակշռությունը: Կոնտոսից բացի, կատաֆրակտները զինված էին նաև երկար՝ մինչև 1,1 մ թրերով կամ սրերով[24,33] և նետ ու աղեղով: Վերջինս օժանդակ զենք էր, սակայն շատ կարևոր, որովհետև դրանցով կատաֆրակտները պահպանում էին հեռահար մարտի հնարավորությունը:

Պարթևստանում և Հայաստանում կատաֆրակտների սպառազինության բարձրորակ զանգվածային արտադրությունը անհերքելի փաստ է, ակնհայտ վկայությունն այն իրողության, որ այս երկրներում զինագործության զարգացման աստիճանը գերազանցում էր հին

հռոմեականը: Երբ II-III դդ. հռոմեացիները վերջնականապես հասկացան, որ պետք է ստեղծել կատաֆրակտոսների գնդեր, նրանք երկար ժամանակ չէին կարողանում արտադրել համապատասխան զրահը և հարկադրված էին օգտագործել հայերից և պարթևներից ավար արված կոմպլեկտները[20,27,37]:

Կատաֆրակտների զորատեսակի մարտունակությունը մեծապես կախված էր մարտական ձիերի խնամքից և մարզվածությունից: Ձիերը ուժեղ և խելոք կենդանիներ են: Նրանք ինքնասպանության հակում չունեն: Ձիերին գրեթե հնարավոր չէ ստիպել մեծ արագությամբ գրոհել մի պատնեշի վրա, որի վրայից նրանք չեն կարող ցատկել: Եթե փաղանգի ամբողջությունը և խորությունը պահպանված էր, հնարավոր է, որ նման պատնեշի մոտեցող ձին կդանդաղեցնի իր ընթացքը և կկանգնի փաղանգի առջև: Այս գրեթե անդիմագրավելի դժվարությունը հաղթահարվում էր ձիերի թե՛ շարքերով, թե՛ զորասյուներով շարժվելու և, տարբեր, սկզբնական շրջանում ոչ մեծ պատնեշները հաղթահարելու երկարատև վարժություններով: Երկրորդ տեղում թերևս ձիավորի և ձիու մտերմիկ հարաբերություններն էին, որոնք հիմնված էին միմյանց օգնելու ու փրկելու բնազդի վրա: Երրորդ հնարքն այն էր, որ նոր վարժեցված ձիերին մտցնում էին կատաֆրակտների գնդերի հին, մարտերին մասնակցած և փորձված ձիերի երամակ: Կատաֆրակտների գունդը երբեք չէր մարտնչում միայն անփորձ ձիերով: Իրենց մարտունակությունը պահպանելու համար կատաֆրակտների գնդերը անընդհատ պետք է մարզվեին: Մարզումներին պարտադիր մասնակցում էին նաև հեծյալ նետաձիգները, որոնց հետ համագործակցությունը մշակվում էր մինչև հնարավոր ավտոմատիզմը: Այս ամենը վկայում է այն մասին, որ կատաֆրակտների գնդերը պարտադրաբար պետք է բաղկացած լինեին պրոֆեսիոնալներից: Իր մասնագիտական նրբություններով, բարդությամբ ու աշխատատարությամբ կատաֆրակտների գնդերի մարզումները ոչ մի բանով չէին զիջում փառաբանված հռոմեական լեգեոնի վարժանքներին:

Եթե կատաֆրակտների զորամասերը ռազմերթերը կատարեին

մարտական ձիերով, ապա հեծյալի և ծանր սպառազինության քաշը շուտ կհոգնեցներ և անմարտունակ կդարձներ ձիերին: Հավանաբար, ինչպես միջնադարյան ասպետները, ամեն մի կատաֆրակտ հեծյալ ունեցել է առնվազն երկու ձի՝ մեկը մարտական, մյուսը բեռնատար և, հավանաբար, մեկ հեծյալ սպասավոր: Հնարավոր է, որ կատաֆրակտների որոշ գնդեր բաղկացած էին 1000 ազատներից և 1000 սպասավորներից, 2-3000 ձիերից, որոնցից 1000-ը՝ մարտական: Դրան պետք է ավելացնել հեծյալ գումակի անձնակազմը, որի քանակը անհայտ է:

Մարտավարությունը

Կատաֆրակտների գունդը գրոհում էր խիտ շարքերով, մի քանի շարք խորությամբ, երբեմն՝ զորասյունով: Կատաֆրակտների դրագոնան սկսում էր թեթև վազքով, ապա արագացված վազքով սլանում էր դեպի հակառակորդը: Հնարավոր է, որ բախումից առաջ այն կարողանար անցնել նույնիսկ քառատրոպ վազքի: 6 կամ 8 շարքից բաղկացած փաղանգը ընդունակ չէր ֆիզիկապես դիմակայելու այսպիսի գրոհին, այդ պատճառով փաղանգի խորությունը հավանաբար կրկնապատկվում էր: Եթե կատաֆրակտների գունդը չէր կարողանում ճեղքել փաղանգի շարքերը, սկսվում էր ձեռնամարտը, որտեղ կողմերի հնարավորություններն արդեն հավասարվում էին: Այդ պատճառով կատաֆրակտների գրոհին միշտ նախորդում էին հեծյալ նետաձիգների գրոհը և հեռահար մարտը, որը հետապնդում էր երկու հիմնական նպատակ. առաջին՝ թուլացնել և խախտել փաղանգի շարքերը, երկրորդ՝ հետախուզել կատաֆրակտների գրոհի ողջ հետագիծը և համոզվել, որ գերծանր հեծելազորի գրոհը կասեցնելու համար հակառակորդն այստեղ տարբեր արգելքներ չի կիրառել: Հեծյալ նետաձիգներն ուղեկցում են կատաֆրակտների գրոհը, պաշտպանում նրա թևերը, հաջողության դեպքում նետահարում շարքերը լքած հոպլիտներին: Խառանի ճակատամարտում պարթևները նախընտրել էին գրոհել ժամեր շարունակ նետահարված հռոմեական լեգեոնների վրա: Երբեմն կատաֆրակտների հաջողված գրոհը կարող էր ուժեղացվել կատաֆրակտների հետևում կանգնած հեծյալ կամ, ավելի հազվադեպ, հետևակային գնդերի հարձակումով: Անհաջողության դեպքում կատաֆրակտները, պաշտպանվելով հեծյալ նետաձիգներով և օգտագործելով իրենց առավելությունը արագության մեջ, դուրս էին գալիս մարտից, նահանջում և հեռվում վերադասավորվում նոր գրոհի համար: Գերծանր հեծելազորի՝ կատաֆրակտների գրոհը տարբերվում էր ծանր հեծելազորի գրոհից իր շարքերի խտությամբ, կանոնավորությամբ և հարվածի ուժգնությամբ: Կատաֆրակտների գրոհը հակառակորդի հեծելազորի վրա նույնպես կատարվում էր ուղեկցող հեծյալ նետաձիգների օժանդակությամբ: Հակառակորդի հեծելազորի համար այն կործանարար էր: Ծանր և թեթև հեծելազորները չէին դիմանում կատաֆրակտների նույնիսկ ճակատային գրոհներին: Սակայն, ինչպես ցանկացած խիստ մասնագիտացված զորատեսակ, գերծանր հեծելազորը շատ զգայուն էր սխալ կամ բավարար չնախապատրաստված գործողությունների հանդեպ: Ռազմական պատմությունը լի է նման դեպքերի նկարագրություններով:

Կատաֆրակտների գնդերի ներկայությունը մարտի դաշտում, նրանց կազմակերպված տեղաշարժը, հսկայական ձիերի տեսքը, զրահի փայլը, շարքերով գրոհելը ու անսպասելի հարձակման մշտական սպառնալիքը խիստ բացասական հոգեբանական ազդեցություն էին առաջացնում հակառակորդի հետևակի և հեծելազորի մեջ: Այս ամենը ուղեկցվում էր հեծյալ նետաձիգների շրջապտույտներով, որոնց արձակած նետերի տարափը ուժեղացնում էր տագնապի զգացումը[1,31,35]:

Արդի ռազմական պատմագրությունը լավ չի պատկերացնում կատաֆրակտների մարտի բոլոր մանրամասնությունները: Ինչպես հունական ու մակեդոնական փաղանգների, այնպես էլ հռոմեական լեգեոնների մարտավարությանը վերաբերող բազմաթիվ հարցերում առկա են տարբեր տեսակետներ ու թեժ վեճեր: Օրինակ՝ մինչև այժմ հասկանալի չէ, կատաֆրակտների դրագոնայի միայն առաջին շար-

քերն ունեին կոնտոսներ, թե մնացած շարքերը ևս: Մնացած շարքերի ծանր կոնտոսները չէին կարող կիրառվել, և հեծյալներին միայն կխանգարեին թրա- սրամարտ վարել: Կարելի է ենթադրել, որ մնացած շարքերի կոնտոսները մնում էին նրանց սպասավորների մոտ և կարող էին թիկունքում փոխանցվել մարտիկներին կրկնակի գրոհից առաջ: Միայն գրավոր և հնագիտական նոր տվյալների կուտակումը, հին աղբյուրների ավելի համակարգային ուսումնասիրությունը և ամենակարևորը՝ պատմական ռեկոնստրուկցիայի վրա հիմնված ճակատամարտերի մոդելավորումները կարող են լույս սփռել չպարզված հարցերի վրա:

Ցանկացած զորատեսակ ունի իր ուժեղ և թույլ կողմերը: Զորավարը հմտորեն պետք է օգտագործեր կատաֆրակտների մարտավարական հնարավորությունները: Ռազմավարական և մարտավարական լուրջ սխալները կարող էին ավարտվել ծանր պարտությամբ:

Այժմ վերլուծենք կատաֆրակտների մասնակցությամբ մի քանի ճակատամարտերի ընթացքը և ելքը:

Մագնեսիայի ճակատամարտը Ք.ա. 190 թ. դեկտեմբերի 22-ին

Հռոմեական բանակի հրամանատարն էր Լուկիուս Կորնելիուս Սկիպիոնը, որին լեգատի պաշտոնում օգնում էր իր հռչակավոր եղբայրը՝ II-րդ պյունիկյան պատերազմի հաղթող Պուբլիուս Սկիպիոնը: Հռոմեացիներն ու դաշնակիցները միասին ունեին մոտ 72000 զինվոր, որից ավելի քան 48000 ծանր հետևակ, մոտ 20000 թեթև հետևակ և 3900 հեծելազոր[34]:

Սելևկյան բանակի գլխավոր հրամանատարն էր արքա Անտիոքոս Գ Մեծը: Նա ուներ 74000 զինվոր՝ 33700 ծանր հետևակ, 23500 թեթև հետևակ և 12000 հեծելազոր, որից 8000 ծանր ու 4000 թեթև հեծելազոր: Մնացած 4800 զինվորը արաբական ջոկատներն էին, ճամբարի կայազորը, մանգաղակիր մարտակարգերի անձնակազմը և 54 մարտական փղերին սպասարկող զինվորները: 8000 ծանր այրուձիուց 6000-ը կատաֆրակտներ էին (մնացածը՝ ագեման և հեծելները), որոնց օժանդակում էր դախերի թեթև հեծելազորը: Երկու բանակների իրական թվաքանակը նշվածից ավելի քիչ էր սանիտարական կորուստների հետևանքով[34]:

Կենտրոնում տեղավորելով իր հետևակը՝ Անտիոքոս Գ-ն թևերին տեղավորում է ծանր հեծելազորը՝ աջից 3000 կատաֆրակտ և 1000 ագեման, ձախից ևս 3000 կատաֆրակտ և 1000 հետերներին: Հեծելազորի առջևից տեղավորում է մանգաղակիր մարտակարգերը:

Մագնեսիայի ճակատամարտում սելևկյան բանակը ծանր պարտություն է կրում: Ճակատամարտի ընթացքը իրենից ներկայացնում է զորքի տարբեր խմբերի պարտությունների շղթա. նախ պարտվում է սելևկյան թեթև հետևակը, ինչին հաջորդում է սելևկյան մեծաթիվ հեծելազորի պարտությունը ձախ թևում, վերջում՝ սելևկյան ծանր հետևակի մասնակի շրջապատումը մեծաթիվ հռոմեական հետևակի կողմից և սելևկյան բանակի փախուստը: Մեզ կարևոր է հասկանալ սելևկյան հեծելազորի պարտության պատճառները: Սելևկյան ձախ թևի գրոհը հռոմեացիների վրա սկսվել է մանգաղակիր մարտակարգերով, որը ձախողվել է հռոմեական թեթև հետևակի ու հեծելազորի հակագրոհի շնորհիվ: Խուճապահար փախուստի ժամանակ մարտակարգերը մխրճվել էին սելևկյան թեթև հեծելազորի և արաբական ուղտերի հեծելազորի մեջ: Վերջիններս խախտել էին կատաֆրակտների շարքերը և ցրել թեթև հեծելազորը, ինչի հետևանքով սելևկյան կատաֆրակտները թևից հարված են ստանում հռոմեական ծանր հետևակից, առջևից նաև պերգամոսյան ու հռոմեական հեծելազորից և հետևակից, չեն կարողանում պատշաճ գրոհ կազմակերպել ու պարտվում են[22,28,34]:

Սելևկյան աջ թևում Անտիոքոսի առավելությունն ակնհայտ էր: Նա ծանր հեծելազորով և թեթևազեններով գրոհում է փոքրաթիվ հռոմեական հեծելազորի և լեգեոնների վրա: Հռոմեական լեգեոններից մեկը կատաֆրակտների հարվածից ջախջախվում է և փախուստի դիմում դեպի հռոմեական ճամբար: Ճամբարից դուրս եկած 2000 մակեդոնացիների ու թրակիացիների հետևակայինների օգնությամբ հռոմեացիները հակագրոհով կարողանում են Անտիոքոսի

հեծյալներին կանգնեցնել անմիջապես ճամբարի պաշտպանական կառույցների առաջ: Այդ ժամանակ թիկունքից հռոմեական ճամբար է ներխուժում սելևկյան թեթև հետևակը, սակայն թիկունքից հռոմեացիներին հարվածելու փոխարեն սկսում է կողոպտել ճամբարը: Արդյունքում հռոմեացիների մոտեցած նոր ուժերը հետ են շպրտում սելևկյան զորքերին: Պատերազմների պատմության մեջ հաճախ կրկնվող պատկեր՝ մարտնչելու փոխարեն հաղթողները զբաղվում են ճամբարի կողոպուտով և տանուլ տալիս մարտը:

Անտիոքոս Գ-ն չկարողացավ օգտագործել իր տրամադրության տակ գտնվող 6000 կատաֆրակտների և մի քանի հազար դախերի գերազանց թեթև հեծելազորի հարվածային մեծ հնարավորությունները: Եթե նա թևերից մեկում կենտրոնացներ իր մեծաթիվ հեծելազորից 6000 կատաֆրակտներին ու 2000 հեծյալ դախ նետաձիգներին, խուսափեր նույն տեղում մարտակարգերի, ուղտերի հեծելազորի կամ փղերի անտեղի օգտագործումից, անցկացներ դասական գրոհ նետաձիգներով, հետո կատաֆրակտներով, ապա ոչ թե մեկ, այլ մի քանի լեգեոն կարող էր փախուստի դիմել, իսկ ճակատամարտի ելքն էլ կարող էր այլ լինել: Վերջապես, Անտիոքոս Գ-ի ամենածանր սխալն այն էր, որ նա անհեթեթ կասկածի պատճառով (Ք.ա. 193 թ. «Հաննիբալին, որը կասկածելի էր դարձել արքային Վիլլիուսի հետ իր զրույցների պատճառով, չթույլատրվեց ներկայանալ խորհուրդ, և դրանից հետո նա այլևս պատվի մեջ չէր»[28]), իր բանակի հրամանատարությունը չհանձնեց կարթագենացի հանճարեղ զորավար Հաննիբալ Բարկային, որը բազմիցս ջախջախել էր մեծաթիվ հռոմեական բանակները և կարող էր փոխել թե՛ ճակատամարտի, թե՛ պատերազմի ելքը:

Տիգրանակերտի ճակատամարտը Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին

Հայկական բանակի հրամանատարն էր արքայից արքա Տիգրան Բ-ն, որը ուներ 20000 հեծելազոր, որից 7500 կատաֆրակտ և 50000 հետևակ, որից 5000 թեթևազեն ու 45000 ծանրազեն, նաև

10000 օժանդակ զորք, ընդամենը՝ 80000 զինվոր: Լուկուլլուսը Տիգրանակերտի պաշարման համար թողնելով մոտավորապես 14000 զինվոր և դաշտային ճամբարում թողնելով ևս 2000 զինվոր, միասին 16000 զինվոր, մարտի դաշտ էր հանել 32000 զինվոր, որից մոտավորապես 22000 ծանր ու 2250 թեթևազեն հետևակ և մոտավորապես 7 250 հեծելազոր[1,4,5,6,8]:

Լուկուլլուսը, հասկանալով, որ դասական ճակատամարտ ընդունելու դեպքում անխուսափելի պարտվելու է, հմտորեն օգտագործեց Տիգրանի սխալը: Տիգրանը փոքրաթիվ զորախմբով գրավեց, բայց հուսալի չամրացավ իր աջ թևում գտնվող բլրի վրա, որից և օգտվեց Լուկուլլուսը և գրոհով գրավեց բլուրը: Բլուրը թաքցրեց, ինչպես Լուկուլլուսը գաղտնի զորաշարժ կատարեց իր ընտիր 10000 լեգեոներներով և անսպասելի գրոհեց Տիգրանի թիկունքի ու աջ թևի վրա, որով փախուստի մատնեց Տիգրանի անշարժ կանգնած կատաֆրակտների գնդերին: Վերջիններս, անշարժ վիճակում, դեռ գրոհի չնետված, առանց կանոնավոր մարտի մեջ մտնելու, մատնվեցին պարտության: Տիգրանակերտի ճակատամարտում հայերը պարտվեցին ոչ թե կատաֆրակտների սխալ կիրառման, այլ հակառակորդից նույն կատաֆրակտների թևն ու թիկունքը չպաշտպանելու պատճառով: Հայկական կատաֆրակտների գրոհը կանխելով, Լուկուլլուսը հանճարեղ ձևով կարողացավ չեզոքացնել ճակատամարտում իրեն սպառնացող գլխավոր վտանգը:

Արածանիի ճակատամարտը Ք.ա. 68 թ. սեպտեմբերի կեսին

Լուկիուս Լիկինիուս Լուկուլլուսի հռոմեական բանակը ուներ մոտ 45000 զինվոր, որից 32000 ծանր հետևակ, մոտ 3000 թեթև հետևակ, 8000 հեծելազոր և 2000 օժանդակ զորք: Արքայից արքա Տիգրան Բ Մեծի բանակը ուներ մոտ 30000 հեծյալ զինվոր, որից մոտ 10000-ը հայկական և մարական ճոշավոր այրուձի[1,4,5,6,8]:

Տիգրանը ցույց տվեց Լուկուլլուսին Միհրդատ Մարի կատաֆ-

ռակտների մեծ մասը և թեթև հեծելազորի բազմաթիվ գնդերը, մոտ 15000 հեծյալ, սակայն գրոհեց հռոմեացիների վրա միայն իբերների և մարդերի մի քանի թեթև հեծելագնդերով: Վերջիններս դյուրությամբ հետ մղվեցին Լուկուլլուսի հեծելազորով ու առաջապահ լեգեոնների կոհորտներով և դիմեցին կեղծ փախուստի, որին միացան նաև Միհրդատ Մարի շքեղ հեծելագնդերը: Լուկուլլուսին «երեք արքաների» թվացյալ փախուստը սկզբում ոգևորեց, իսկ երբ նրա ոգեշնչված հեծելազորը, հետապնդելով հակառակորդին, շատ հեռացավ հետևակից, անհանգստացրեց, սակայն արդեն ուշ էր. հռոմեական ողջ հեծելազորը ենթարկվեց դարանակալած հայկական կատաֆրակտների գնդերի ուժգին հարվածին: Լուկուլլուսի հետևակայինները չհասցրին օգնության գալ, հռոմեական հեծելազորը հսկայական կորուստներ կրեց և ջախջախվեց: Փրկվեց միայն այն աննշան մասը, որը հասցրեց հասնել հռոմեական հետևակին և ապաստանել նրա հետևում: Կատաֆրակտների հարվածը ուժեղացրին կեղծ նահանջից վերադարձած հայկական թեթևազեն հեծելազորը ու Միհրդատ Մարի կատաֆրակտները: Հռոմեական հետևակի հետ հայկական հեծելազորը ձեռնամարտի չբռնվեց, միայն հեռվից նետահարեց նրանց, մեծ վնաս պատճառելով հռոմեացիներին:

Արածանիի ճակատամարտը կատաֆրակտների գնդերի ճիշտ կիրառման վառ օրինակ է: Արածանիի ճակատամարտում Լուկուլլուսը իրեն ցույց տվեց որպես գերազանց հետևակային հրամանատար, սակայն պարտվեց իրեն անծանոթ հեծելազորային մարտավարությանը: Տիգրան Մեծը ապացուցեց իր՝ մեծ զորավարի, հատկապես հանճարեղ հեծելազորային հրամանատարի համբավը:

Զելայի ճակատամարտը Ք.ա. 67 թ. գարնանը

Հայ-պոնտական բանակի հրամանատարն էր արքա Միհրդատ Զ Եվպատորը, որը Մեծ Հայքից բերված և Պոնտոսում ու Փոքր Հայքում հավաքագրված բանակի կազմում ուներ 30000 զինվոր, որից 10000-ը՝ հեծելազոր, այդ թվում՝ 4000 հայ կատաֆրակտներ ու 1000

ծանր հունա-պոնտական հեծելազոր և 20000 հետևակ, որից 7000-ը՝ թեթև հետևակ[23,24]: Տրիարիուսը մոտ 5000 զինվոր թողնելով դաշտային ճամբարում, Միհրդատի դեմ դուրս էր եկել 40000 հռոմեացիների ու դաշնակիցների բանակով, որից հռոմեացիներ էին միայն 17000[1]-ը:

Միհրդատ Զ Եվպատորը գիտեր, որ Զելայի մոտակայքում հանդիպում է միջակ հռոմեական զորավարի, որը շատ վատ է պատկերացնում կատաֆրակտների մարտավարությունը ու հարվածի կործանիչ ուժը: Դրա հետ մեկտեղ, Միհրդատը այնպես պետք է անցկացներ ճակատամարտը, որ հռոմեացիները չկարողանան օգտվել իրենց ծանր հետևակի բացարձակ գերազանցությունից: Ճակատամարտի ընթացքի վերլուծությունը և հետագա մոդելավորումը ցույց են տալիս, որ Միհրդատը կարողացել է լրիվ ծավալով իրականացնել իր մտադրությունները: Մինչ հայ-պոնտական բանակի կենտրոնը և ձախ թևը մեծ դժվարությամբ դիմակայում էին հռոմեական բանակի հարձակմանը, աջ թևում կատաֆրակտների գրոհի գաղտնի նախապատրաստումը այնքան հաջող ընթացք ունեցավ, որ դիմակայող հռոմեական լեգեոնները նույնիսկ չդիմավորեցին գրոհը խորացված փաղանգով, ինչի հետևանքով կատաֆրակտների հարվածող դրագոնան կտրել անցել էր երկու լեգեոնների կոհորտների միջով: Կատաֆրակտների հետևից ներխուժել էին թեթև հեծելազորը և թեթևազեն հետևակը: Հռոմեացիները փորձել էին հեծելազորից փրկվել ճահճի մեջ, և այնտեղ նետահարվել էին նետաձիգների գնդերով:

Այս ճակատամարտում հռոմեացիները շատ մեծ կորուստներ են ունեցել. զգալիորեն ավելի շատ, քան հայերը Տիգրանակերտի ճակատամարտում: Եթե Միհրդատը պատահմամբ չվիրավորվեր գերի կենտուրիոնի հարվածից, հռոմեացիների հետապնդումը կշարունակվեր մինչև ճակատամարտի դաշտի վերջը, որտեղ երկու գետերը, միանալով իրար, բնական ծուղակ էին ստեղծում, և հռոմեական բանակը այնտեղ իսպառ կկործանվեր:

Այս ճակատամարտը անպատրաստ ծանր հետևակին կատաֆրակտների ճակատային հարվածի դասական օրինակ է:

Խառանի ճակատամարտը Ք.ա. 53 թ. մայիսի վերջին

Արևմտյան Միջագետքում պարթևական և հռոմեական բանակների միջև տեղի ունեցած մեծ ճակատամարտի մասին մենք տեղեկանում ենք Պլուտարքոսի, Ապպիանոսի, Կասսիուս Դիոնի և Ֆլորի երկերից[4,9]: Արդի պատմաբաններից ճակատամարտի ընթացքը քննել են բազմաթիվ պատմաբաններ, որոնցից կարևոր են Դիբվոյզի[19], Բոկսչանինի[16], Խազանովի[32] և Նիկոնորովի[25] նկարագրությունները: Խառանի ճակատամարտի մանրամասն վերլուծությունը և ընթացքի մոդելավորումը կատարել է տողերիս հեղինակը[18]:

Միջագետք ներխուժած Մարկուս Լիկինիուս Կրասսուսի հռոմեական բանակը ուներ ավելի քան 50000, հավանաբար մինչև 70000 զինվոր, որից մոտ 8-10000-ը՝ հեծելազոր: Պարթևական բանակը, որի հրամանատարն էր զորավար Սուրենը, ուներ մոտ 40-50000 զինվոր, որից մոտավորապես կեսը հեծելազոր էր: 20-25000 հեծելազորից մոտ 5-10000-ը կատաֆրակտներ էին[18]: Սուրենի անձնական գունդը բաղկացած էր մեկ դրոշ՝ 1000 կատաֆրակտներից, և ինը դրոշ՝ 9 000 հեծյալ նետաձիգներից: Ողջ պարթևական հետևակը տեղակայված էր արևմտյան Միջագետքի կարևորագույն քաղաքներում, որոնք վերածվել էին անառիկ ամրոցների: Հռոմեական բանակին դաշտում դիմակայում էր միայն պարթևական հեծելազորը:

Մինչև Խառանի ճակատամարտը հռոմեացիները Ք. ա. 73-71 թթ. երրորդ պոնտական պատերազմի ժամանակ հնարավորություն էին ունեցել ծանոթանալու հայ-պարթևական հեծյալ մարտավարության որոշ նմուշների (Միհրդատ Զ Եվպատորի հիմնական հարվածային ուժը փոքրհայքյան հեծելազորն էր, որի մի մասը զրահապատ էր և հավանաբար տիրապետում էր կատաֆրակտների մարտավարության որոշ տարրերի)[1,23]: 69 թ. Լուկուլլուսը, քաջ գիտակցելով հայկական կատաֆրակտների կործանիչ ուժը, Տիգրանակերտի ճակատամարտում հմտորեն կանխեց հայկական կատաֆրակտների հնարավոր գրոհը, հարձակվելով անշարժ գնդերի վրա թևից ու թիկունքից,

որի շնորհիվ փայլուն հաղթանակ տարավ[1]: 68 թ. Արածանիի ափին Տիգրան Բ Մեծի հայկական հեծյալ բանակը մեծ ճակատամարտ տվեց Լուկուլլուսի բանակին: Ճակատամարտին մասնակցած ուժերի հարաբերակցությունը շատ նման էր Խառանի ճակատամարտին՝ մեկ որոշիչ տարբերությամբ. արևելյան հեծյալ մարտավարությանը անծանոթ միջակ զորավար Մարկուս Լիկինիուս Կրասսուսի փոխարեն 68 թ. հռոմեական բանակին առաջնորդում էր իր ժամանակի հռոմեական ամենահմուտ զորավարներից մեկը՝ Լուկիուս Լիկինիուս Լուկուլլուսը: Ճիշտ է, վերջինս չխուսափեց Տիգրան Բ Մեծի պատրաստած ծուղակից, բայց չնայած պարտությանը, կարողացավ պահպանել զորքը և նահանջել Աղձնիք: 67 թ. Զելայի ճակատամարտում Միհրդատ Զ Եվպատորի հայ-պոնտական զորքերը, օգտվելով հռոմեական բանակի միջակ հրամանատար Տրիարիուսի կոպիտ սխալներից, կատաֆրակտների գնդերի կործանիչ հարվածով ճեղքեցին հռոմեական բանակի շարքերը և գրեթե ոչնչացրին հռոմեական բանակի երկու լեգեոն[1]:

65 թ. Գնեուս Պոմպեուսը, Տիգրան Մեծի խնդրանքով, հյուսիսային Միջագետք հայերին օգնության ուղարկեց Ափրանիուսի լեգեոնը, որտեղ նա մարտնչեց պարթևների դեմ մինչև 64 թ. զինադադարը: 64 թ. Պոմպեուսը Սիրիայից հայերին օգնության ուղարկեց նաև Ավլուս Գաբինիուսի ոչ մեծ բանակը, որի կորիզն էր հենց Գաբինիուսի լեգեոնը: Համառ մարտերի ընթացքում երկու լեգատներն էլ լավ ուսումնասիրեցին արևելյան հեծելազորային մարտավարությունները, որոնք միմյանց դեմ օգտագործում էին թե՛ դաշնակից հայերը, թե՛ ախոյան պարթևները: Եթե 53 թ. հռոմեացիների պարթևական արշավանքը առաջնորդեր Ավլուս Գաբինիուսի նման հմուտ զորավար, ապա պարթևները ահեղ հակառակորդի կհանդիպեին:

Կրասսուսի անտեղյակությունը արևելյան հեծյալ մարտավարությանը վկայում էր ոչ միայն Կրասսուսի գոռոզամտության, այլև հռոմեական ռազմավարական մտքի լուրջ իներցիայի մասին: Եթե գոռոզամիտ կոնսուլ Կրասսուսը բարեհաճեր շփվել Սիրիայում տեղադրված լեգեոնների բարձր և միջին հրամանատարական կազմի

հետ, ապա վերջին 20 տարիների պոնտական և հայկական պատերազմների վետերանները շատ բան կպատմեին զորավարին թշնամու մարտավարության մասին: Կրասսուսը արհամարհում էր պարթևներին և չէր կասկածում, որ հաղթելու է նրանց: Նա երազում էր ենթարկեցնել ոչ միայն պարթևներին, այլև հնդիկներին, ու հասնել Հնդկական օվկիանոս:

54–53 թթ. հռոմեա-պարթևական պատերազմի ընթացքում Կրասսուսը կատարեց բազմաթիվ ռազմավարական և մարտավարական սխալներ: Մենք կքննենք միայն այն սխալները, որոնք կապված էին արևելյան հեծելազորային մարտավարությանը դիմակայելու խնդրին:

Առաջին սխալը թույլ հետախուզությունն էր: Հռոմեացիները պետք է ունենային ապագա արշավանքի երթուղու մանրամասն քարտեզները և հնարավոր դիմադրության կանխատեսելի վայրերի մանրամասն նկարագրությունը: Երկրորդ սխալը հռոմեական բանակի հեռահար մարտի համեմատաբար թույլ հնարավորություններն էին: Հռոմեական բանակի թեթևազենների մեծ մասը պետք է կազմեին նետաձիգների գնդերը, որոնք կկարողանային հեռահար մարտ վարել: Նրանք հատուկ պետք է մարզվեին, ինչպես համագործակցել ծանր հետևակի և հեծելազորի հետ: Եվ վերջապես, դեռ Ալեքսանդր Մակեդոնացին Միջին Ասիայում քոչվորների դեմ հաջողությամբ օգտագործել էր հեռահար նետող մեքենաներ՝ կատապուլտները[17,31]: Երրորդ սխալը. ավելի ուժեղ հեծելազորի դեմ մարտի բռնվելիս, հռոմեական հեծելազորը երբեք չպետք է հեռանար իր հետևակից այնքան, որ հետևակը չհասցներ նրան օգնության հասնել: Չորրորդ սխալը բանակի հստակ կառավարման բացակայությունն էր: Եթե հռոմեական լեգեոնները և դաշնակիցները նահանջեին ճիշտ դասավորությամբ՝ մարտակարգով, ապա դարձյալ կունենային մեծ կորուստներ, սակայն պարթևական հեծելազորին դժվար թե հաջողվեր ոչնչացնել հռոմեական հետևակի կազմած գրեթե բոլոր կառները: Ճակատամարտի նկարագրությունից երևում է, որ պարթևները հեծյալ նետաձիգների հարձակումով նախապատրաստել էին կատաֆրակտների առաջին գրոհները, սակայն նույնիսկ այդ դեպքում վերջիններիս չէր հաջողվել ճեղքել և ոչնչացնել հռոմեական լեգեոնների կառները: Ամեն անգամ կատաֆրակտները հետ էին մղվել, որից հետո պարթևական թեթև հեծելազորը նորից վերսկսել էր հեռահար նետաձգությունը: Հռոմեացիները նահանջելիս չէին կարողանում իրենց հետ տանել ծանր վիրավորներին, որոնք մնացին և կոտորվեցին: Տևական և չդադարող նետահարությամբ պարթևները խիստ հյուծեցին հռոմեացիներին: Հինգերորդ սխալը. հռոմեացի զորավարները իրենց զորքերը չնախապատրաստեցին նոր, նախկինում անծանոթ հակառակորդի ոչ արտաքին տեսքին, ոչ հնարավոր մարտավարությանը: Հետագայում, հռոմեական լեգեոնները բազմաթիվ ճակատամարտերում և կհաղթեն պարթևներին, և կկրեն ծանր պարտություններ: Այսուհետև պարթևները կհամարվեն ահեղ, բայց ոչ անպարտելի հակառակորդներ, սակայն հռոմեական գիտակցության մեջ ընդմիշտ կդրոշմվի սկզբնական սարսափը պարթևական հեծելազորի հանդեպ:

Խառանի ճակատամարտում պարթևների հաղթանակը պայմանավորված էր երկու զորատեսակների՝ գերծանր՝ կատաֆրակտների, և թեթև հեծելազորների փայլուն համագործակցությամբ: Խառանի ճակատամարտում տաղանդավոր պարթև զորավար Սուրենը պայքարում էր միջակ զորավար Կրասսուսի դեմ: Եթե Կրասսուսի փոխարեն հռոմեական բանակը առաջնորդեր Լուկուլլուսի մակարդակի մեկ ուրիշ հռոմեացի զորավար, հռոմեացիները, ամենայն հավանականությամբ, դարձյալ կարող էին պարտվել, սակայն պարտությունը այսքան ջախջախիչ չէր լինի:

Աման լեռան Ք.ա. 39 թ. և Զևգմայի Ք.ա. 38 թ. ճակատամարտերը

Հռոմեացի ականավոր զորավար Պուբլիուս Վենտիդիուս Բասսուսը (մոտ Ք.ա. 100–38 թթ. հետո) այն հազվադեպ հռոմեացի զորավարներից էր, որը երեք անգամ կարողացել էր ծանր պարտության մատնել պարթևներին[17,30]: Բասսուսին հաջողվում է երեք ճա-

կատամարտերում ջախջախել պարթևներին և նրանց դաշնակիցներին: Առաջինը նա հարձակվում է պարթևների կողմը անցած զորավար Լաբիենի զորքերի վրա, իսկ երբ նրան օգնության են հասնում պարթև հեծյալները, ձևացնելով, որ վախենում է պարթևներից, ամրանում է մի բլրի գագաթին: Պարթևները, իրենց բազմաթիվ հաղթանակներից արբած, խախտելով մարտավարության կանոնները, նետվում են գրոհի դեպի բլրի գագաթը և ջախջախվում լեգեոներների կատաղի հակագրոհից: Բասսուսը նետվում է նահանջող Լաբիենի հետևից, հասնում և կործանում է նրան: Երկրորդ ճակատամարտը տեղի ունեցավ Ամանլեռան վրա, որտեղ Բասսուսի զորավար Կվինտուս Պոպպեդիուս Սիլունը հարձակվում է պարթև զորավար Փարնապատի վրա: Փարնապատը ինքն է անցնում հակագրոհի և գրեթե հաղթում է, սակայն պարտվող հռոմեացիներին օգնության է հասնում Վենտիդիուսը և ջախջախում պարթևներին[15,19,39]:

38 թ., իմանալով, որ արքայազն Պակորը մեծ պարթևական բանակով պատրաստվում է արշավելու Ասորիք, Վենտիդիուսը տեղի ազնվականներից մեկին հայտնում է, որ ամենաշատը վախենում է, որ պարթևները Եփրատը կանցնեն Զևգմա քաղաքի մոտ: Պարթևները մոտ 40 օր են ծախսում, մինչև կառուցում են կամուրջները, և գետն անցնում են այն ժամանակ, երբ Վենտիդիուսը արդեն հավաքել ու մարտի էր պատրաստել իր զորքերը: 20000 ընտիր պարթև հեծյալներին կանոնավոր մարտում դիմակայել նա չէր կարող: Ոչ մեծ ջոկատով հարձակվելով պարթևների վրա, նա կեղծ խուճապահար փախուստ է ձևացնում դեպի դարանակալած լեգեոնները[17], ինչի հետևանքով պարթևները շրջապատվում և գրեթե ամբողջովին կոտորվում են: Այս երրորդ ճակատամարտում, որը տեղի էր ունեցել այն օրը, երբ 15 տարի առաջ պարտվել էր Կրասսուսը, սպանվում է նաև արքայազն Պակորը: Պարթևները դուրս են շպրտվում Ասորիքից:

Վենտիդիուս Բասսուսը մեծ զորավար էր, նրա հաղթանակները շատ ուսանելի են: Նրա սկզբունքներն էին՝ թույլ չտալ թշնամուն օգտագործել իր ուժեղ կողմերը, խուսափել հարթ տարածություններում հեծելազորի դեմ մարտի բռնվելուց, խորամանկությամբ, արագությամբ, անսպասելի որոշումներով խճճել հակառակորդին, հանկարծակի կատաղի հարվածներ հասցնել, պարտվածին հետապնդել մինչև վերջ:

Կատաֆրակտոսների և կլիբանարների գնդերի բացակայության ֆենոմենը Ք. ա. I – Ք. հ. II դդ. հռոմեական բանակում

Հռոմեական ռազմական մտքի երկար տևած իներցիան զարմանք է առաջացնում: Հռոմեացիները ունակ էին արագ փոխառելու ցանկացած ցեղի հաջողված ռազմական հնարք կամ զենքի տեսակ: Այս դեպքում հռոմեացիները գրեթե երեք դար ուշացրին սեփական գերծանր հեծելազորի կազմակերպումը: Դաշնակից ժողովուրդներից հավաքագրած, երբեմն էլ վարձկանի կարգավիճակում գտնվող զորամասերը չէին լրացնում ստեղծված բացը: Հռոմեական տերությունը արդեն Ք.ա. I դարի վերջին քառորդին ուներ կատաֆրակտոսների որակյալ գնդեր կազմակերպելու բոլոր ինտելեկտուալ, զինվորական և նյութական միջոցները: Ռազմական գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ ռազմաբեմերում, հատկապես հարթավայրային տեղանքում, հռոմեական բանակի թույլ հեծելազորը, նույնիսկ գերազանց հետևակի օգնությամբ, գրեթե անզոր էր գրագետ գործող պարթևական ռազմավարության դեմ: Վերջիններիս ռազմավարության էությունը այն էր, որ պարթևները մեծաքանակ հետևակով համառորեն պաշտպանում էին իրենց քաղաքները, իսկ գերազանց հեծելազորով տկարացնում ու ոչնչացնում էին հակառակորդին հարթավայրերում: Հռոմեացիները հաճախ պարթևներին հաղթում էին ոչ այնքան ռազմական, որքան դիվանագիտական հնարքների շնորհիվ:

Այս ժամանակաշրջանում հիմնականում հարձակվում էր Հռոմը, իսկ Պարթևստանը պաշտպանվում էր, հազվադեպ անցնելով հակահարձակման: III դ. 30-ական թթ. Սասանյան Պարսկաստանը

դարձավ այն հզոր ախոյանը, որի հանդեպ Հռոմը որդեգրեց հիմնականում պաշտպանական քաղաքականություն, և հենց այդ ռազմական համակարգում էլ ստեղծվեցին հռոմեական բանակի կատաֆրակտոսների և կլիբանարների գնդերը:

Վերջաբան. կատաֆրակտների դերը համաշխարհային ռազմարվեստում

Խազանովը գրում էր[32]. «Կատաֆրակտների գնդերը, ըստ էության, այն միակ զորատեսակն էին, որը կարողացավ դիմակայել հռոմեական լեգեոնին ոչ թե պատահաբար, այլ մշտապես: Եթե հռոմեական լեգեոնը անտիկ ռազմական մտքի գագաթնակետն էր հետևակի կազմակերպման իմաստով, ապա կատաֆրակտների հեծելագնդերը նույն ռազմական մտքի գագաթնակետն էին այրուձիու կազմակերպման իմաստով:» Անվանի պատմաբանի կարծիքին կարելի է ավելացնել, որ պարթևական, հետո սասանյան, նաև հայկական ու սարմատական ռազմական համակարգի ուսումնասիրությունը արդի համաշխարհային ռազմարվեստի պատմության անբավարար մշակված և թույլ հիմնավորված բնագավառներից մեկն է[26]:

Կատաֆրակտներ զորատեսակի չափազանց մարտավարական մասնագիտացումը ակնհայտ է: Սակայն կատաֆրակտների գնդերի հնարավորությունների գրագետ օգտագործման դեպքում էր միայն այն վերածվում խորտակիչ ուժի, որից դարեր շարունակ այնքան սարսափում էին իրենց հիմնական հակառակորդները՝ հռոմեացիները:

Եվրոպամետ ռազմական պատմաբաններն առայսօր համարում են, որ հռոմեական հետևակային մարտավարությունը Հին աշխարհի ռազմական արվեստի գագաթն է, չնկատելով, որ կատաֆրակտների հեծելազորային մարտավարությունը Հին աշխարհի ռազմական արվեստի երկրորդ գագաթն է: Բազմաթիվ ծանր պատերազմների հետևանքով ոչ թե պարթևներ-պարսիկները կամ հայերը անցան գերազանցապես հետևակային մարտավարությանը, այլ հռոմեացիները ընդօրինակեցին իրենց ախոյանների հեծելազորային գնդերի կառուցվածքը ու մարտավարությունը և մեծ դժվարությամբ, միայն մի քանի դար հետո կարողացան ստեղծել բավարար մակարդակի կատաֆրակտոսների հեծելագնդեր: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հին աշխարհի ռազմական արվեստի երկու գագաթներից հեծելազորայինն էր մի փոքր ավելի բարձր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Ա. Տիգրան Մեծի բանակը մ.թ.ա. 95-55 թթ. Պրակ I. - Եր.: «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2009. - 372 էջ, նկ. («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար. հատոր II):
2. Գևորգյան Ա. Տիգրան Մեծի բանակը մ.թ.ա. 95-55 թթ. Պրակ II. - Եր.: «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2010. - 449 էջ, նկ. («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար. հատոր II):
3. Գևորգյան Ա. Տիգրան Մեծի բանակը մ.թ.ա. 95-55 թթ. Պրակ III. - Եր.: «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2011. - 484 էջ, նկ. («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար. հատոր II):
4. Դիոն Կասսիոս Կոկկեյանոս. Հռոմեական պատմություն (Հատվածներ). Թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Ս. Մ. Կրկյաշարյանի. էջ 113-268. // Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 9., Հին հունական աղբյուրներ Ա. - Եր.: ՀՍՍՀ հրատ., 1976:
5. Էքհարտ Կ. Տիգրան Բ և հայ-լուկուլլեան պատերազմները: Թարգմ. գերմ., աշխատասիրեց Հ. Գարեգին Գարանֆիլեան: Վիեննա, 1926. - 291 էջ:
6. Մանանդյան Հ. Տիգրան Բ. յեվ Հռոմը. նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների. - Յերեվան, Արմֆան-ի հրատ., 1940. - 251 էջ:
7. Մանասերյան Ռ. Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ. - Եր.: «Արեգ», 1997. - 216 էջ:
8. Մանասերյան Ռ. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94-64 թթ. Երկրորդ, լրացված հրա-

տարակություն. - Եր.: «Լուսակն», 2007. - 260 էջ:
9. Պլուտարքոս. Կենսագրություններ. Կազմեց, հին հունարենից թարգմ., առաջաբանը և ծանոթագրութ. գրեց Սիմոն Գրքաշարյանը. - Եր.: Սարգիս Խաչենց, 2001. - XII + 392 էջ:
10. Банников А. В. Позднеримская сверхтяжелая кавалерия // Вестник Санкт-Петербургского университета. Сер. 2. - 2007, Вып. 4, с. 165-171.
11. Банников А. В. Причины и характер изменений в римском вооружении (I–III вв. н.э.) // Проблемы истории, филологии, культуры. - 2015, No3, с. 77–90.
12. Белоусов В. В. История изучения вооружения и военного дела сарматов в отечественной науке // ВГУ. Серия: История. Политология. Социология. 2010, 1. - Воронеж, 2010. - с. 52-58.
13. Бикерман Э. Государство Селевкидов. Пер. с франц. Л. М. Глускиной. Отв. ред. И. С. Свенцицкая. - М.: Главная редакция восточной литературы издательства «Наука», 1985. - 264 с.
14. Бокщанин, А. Г. Парфия и Рим: Возникновение системы политического дуализма в Передней Азии. - М.: Изд-во Московского университета, 1960. - 252 с.
15. Бокщанин А. Г. Парфия и Рим: Система политического дуализма в Передней Азии (Исследование о развитии международных отношений позднего периода истории античного мира). Часть II. - М.: Изд-во Московского университета, 1966. - 304 с.
16. Бокщанин А. Г. Битва при Каррах (Война Марка Лициния Красса с Парфией в 54—53 гг. до н. э.) // Вестник древней истории, 1949, 4. - с. 41-50.
17. Вэрри Дж. Войны античности от греко-персидских войн до падения Рима. Пер. с англ. Т. Баракиной, А. Никитина, Е. Никитиной, С. Самченко, Т. Сенькиной, А. Чеха. - М.: Эксмо, 2009. - 232 с., ил. - (Военная история человечества).
18. Геворгян А. М. Анализ и моделирование сражения при Каррах 53 г. до н.э. - Аштарак, Авторское издание, 2020. - 64 с. (рукопись).

19. Дибвойз Н. К. Политическая история Парфии. Пер. с англ., научн. ред. и библиографич. приложение Б. П. Никонорова. - СПб.: Филологический факультет СПбГУ, 2008. - 816 с., ил. - (Историческая библиотека).
20. Дмитриев В. А. «Всадники в сверкающей броне»: Военное дело Сасанидского Ирана и история римско-персидских войн. Отв. ред. В. П. Никоноров. - СПб.: «Петербургское Востоковедение», 2008. - 368 с. - (Серия «Militaria Antiqua», XII).
21. Кармов Т. М. Погребения военной знати Западного Предкавказья и проблема происхождения конницы катафрактов у сарматов. // Центральная Азия от Ахеменидов до Тимуридов: археология, история, этнология, культура. Материалы международной научной конференции, посвященной 100-летию со дня рождения А. М. Беленицкого (Санкт-Петербург, 2–5 ноября 2004 года).- СПб.: Институт истории материальной культуры РАН, 2005. - с. 104-108.
22. Ливий, Тит. История Рима от основания города. Том III. Ред. пер. М. Л. Гаспаров, Г. С. Кнабе, В. М. Смирин. Отв. ред. Е. С. Голубцова. - М. Изд. «Наука», Главн. редакция восточн. литературы, 1994. - 768 с.
23. Наумов Л. А. Войны Митридата (взгляд дилетанта), 2009. - 95 с. http://gym1505.ru/files/pages/page4626-voynamitridata.doc
24. Никоноров В. П. Вооружение и военное дело в Парфии. Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук. - Ленинград, 1987. - 274 с. http://s136.turbobit.net:9004
25. Никоноров В. П. К вопросу о парфянской тактике (на примере битвы при Каррах) // Военное дело и средневековая археология Центральной Азии. - Кемерово, 1995. с. 53 – 61.
26. Никоноров В. П. К вопросу о парфянском наследии в сасанидском Иране: военное дело // Центральная Азия от Ахеменидов до Тимуридов: археология, история, этнология, культура. Материалы

международной научной конференции, посвященной 100-летию со дня рождения Александра Марковича Беленицкого (Санкт-Петербург, 2—5 ноября 2004 года). — СПб.: Институт истории материальной культуры РАН, 2005. с. 141-179.
27. Никоноров В. П. (Санкт-Петербург) О вкладе кочевников Центральной Азии в военное дело античного мира (на примере жестких седел) // Иран и античный мир: политическое, культурное и экономическое взаимодействие двух цивилизаций: тезисы докладов международной научной конференции (Казань, 14–16 сентября 2011 г.) / сост. и отв. ред. Э.В. Рунг, О.Л. Габелко. – Казань: Казан. ун-т, 2011. с. 125–127.
28. Полибий. Всеобщая история. В 2-х т. Том II. Книги XI – XXXIX. Пер. с древнегреч. Ф. Мищенко. - М.: ООО «Издательство АСТ», 2004. - 766 с. - (Историческая библиотека).
29. Садаев Д. Ч. История древней Ассирии. - М. Изд. «Наука», Главн. редакция восточн. литературы, 1979. - 248 с.
30. Фаррох К. Персы: Армия Великих царей. Пер. с англ. Л. Синицыной. Отв. ред. А. Ефремов. - М.: Эксмо, 2009. - 344 с., ил. - (Военная история человечества).
31. Фронтин, Секст Юлий. Стратегемы (военные хитрости). Пер. А. Б. Рановича. - с. 161-274. // Военное искусство античности. - М.: Эксмо. - СПб. Terra fantastica, 2003. - 764 с. - (Антология мысли).
32. Хазанов А. М. Катафрактарии и их роль в истории военного искусства // Вестник древней истории, 1968, 1. - с. 180-191.
33. Хазанов А. М. Очерки военного дела сарматов. - М. Изд. «Наука», Главн. редакция восточн. литературы, 1971. - 172 с.
34. Шкрабо Д. Битва при Магнесии (190 г. до н. э.) // «Воин», 12, 2003. - с. 2-12.
35. Kryśkiewicz H. The Parthians – A Worthy Enemy of Rome? Remarks on Roman-Parthian Political Conflict in the I st cent. B. C., and its Influence on Roman Imperial Ideology // Shidnij svit, 2017, No 3, pp. 60–72.

36. Nagy, Katalin. The arms terminology of the Sarmatian army in the written sources (The study was supported by OTKA Grant no.68762). http://acta.bibl.u-szeged.hu/5845/1/chronica_007_008_151-160.pdf
37. Negin, Andrey & d'Amato, Raffaele. Roman Heavy Cavalry (1) Cataphractarii & Clibanarii 1st Century BC–5th Century AD. - Oxford, Osprey Publishing Ltd, 2018. - 100 p.
38. Syvanne, Iikka (University of Haifa, Israel). Parthian Cataphract vs. the Roman Army 53 BC-AD 224. Historia i swiat, nr 6 (2017). pp. 33-54.
39. Wilcox, Peter. Rome's Enemies (3) Parthians & Sassanid Persians. - Oxford, Osprey Publishing Ltd, 2001. - 46 p.
40. Нефёдкин, Александр. Военное дело древних персов. - М.: Эксмо: Яуза, 2022. - 272 с. (Серия «Лучшие воины в истории»).

РЕЗЮМЕ

КАТАФРАКТЫ: СВЕРХТЯЖЕЛАЯ КАВАЛЕРИЯ ДРЕВНЕГО МИРА. ЧАСТЬ 1. II–I ВВ. ДО Р.Х.

Катафракты (древнегреческое κατάφρακτος — «покрытые броней») - это специализированная тяжелая кавалерия античного мира. Современные историки катафрактами называют парфянскую (а также сасанидскую), армянскую и сарматскую тяжелую кавалерию. Значительно позже организованную римскую тяжелую кавалерию они предпочитают называть катафрактариями и клибанариями. Учитывая особенности организации, снаряжения и тактики, А. В. Банников предложил катафракты назвать сверхтяжелой кавалерией древнего мира. Я полностью согласен с этим удачным названием и буду использовать его в дальнейшем.

В статье анализируется снаряжение, организация и тактика армянских и парфянских катафрактов. Приводится анализ семи сражений, в которых использовались катафракты. В сражениях при Арацани в середине сентября 68 г. до р.Х., Зеле весной 67 г. до

р.Х., Каррах в конце 53 г. до р.Х. правильное использование полков катафрактов приводило к победам. В сражениях при Магнесии 22 декабря 190 г. до р.Х., Тигранакерте 6 октября 69 г. до р.Х., на горе Аман в 39 г. до р.Х. и у Зевгмы в 38 г. до р.Х. ошибки полководца или неумелое использование полков катафрактов приводило к поражениям.

Чрезмерная тактическая специализация полков катафрактов очевидна. Только при грамотном использовании их возможностей на поле боя, они превращались в ту страшную силу, которая на протяжении веков приводила в ужас их основных соперников - римлян.

Вершиной военного искусства Древнего мира считалась римская пехотная тактика. Конная тактика катафрактов — это вторая высшая ступень военного искусства Древнего мира. В результате многочисленных войн, не парфяне-персы или армяне перешли к преимущественно пехотной тактике, а римляне, со временем, переняли тактику противников и организовали полки катафрактариев весьма неплохого качества. Поэтому, мы можем заключить, что кавалерийская «вершина военного искусства» оказалась несколько выше ее «пехотной вершины».

ABSTRACT

CATAPHRACTES: SUPERHEAVY CAVALRY OF THE ANTIQUITY. PART I. II-I CENTURIES BCE

Cataphracts (Ancient Greek κατάφρακτος - "covered with armor") were specialized heavy cavalry of the ancient world. Modern historians call Parthian (as well as Sassanid), Armenian and Sarmatian heavy cavalry cataphracts. They prefer to call much later organized Roman heavy cavalry cataphractarii and clibanarii. Taking into account the peculiarities of organization, equipment and tactics, A.V.Bannikov suggested calling cataphracts the super-heavy cavalry of the ancient world. The author

fully agrees with this apt definition and uses it further on.

The article analyzes the equipment, organization and tactics of the Armenian and Parthian cataphracts. Seven battles in which cataphracts were used are studied. In the battles of Aratsani in mid-September 68 BCE, Zeleh in the spring of 67 BCE, Carrhae at the end of 53 BCE, the proper usage of cataphract regiments led to victories. In the battles of Magnesia on December 22, 190 BCE, those of Tigranakert on October 6, 69 BCE, Mount Aman in 39 BCE and Zeugma in 38 BCE, the commander's mistakes or the inept use of cataphract regiments led to defeats.

The extreme tactical specialization of the cataphract regiments is obvious. Only by using their capabilities on the battlefield properly did they become the considerable force that terrified their main rivals, the Romans, for centuries.

The pinnacle of military art in the Ancient World was considered to be Roman infantry tactics. The cavalry tactics of the cataphracts was the second highest level of military art in the Ancient World. As a result of numerous wars, it was not the Parthians-Persians or Armenians who switched to predominantly infantry tactics, but the Romans who over time adopted the tactics of their opponents and organized regiments of cataphracts of sufficient quality. Therefore, we can conclude that the cavalry "pinnacle of military art" turned out to be somewhat higher than its "infantry pinnacle".

Հոդված 3.

ԱԼԵՔՍԵՅ ԼՈՍԵՎԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր. *Ա. Ֆ. Լոսև, էսթետիկայի պատմություն, անտիկ փիլիսոփայության պատմություն, Դավիթ Անհաղթի գնահատականը, Լոսևի երկերի հայերեն թարգմանության անհրաժեշտությունը, անտիկ փիլիսոփայության պատմության թարգմանության առաջնահերթությունը:*

Նախաբան

Ալեքսեյ Ֆյոդորովիչ Լոսևը (1893–1988 թթ.) XX դ. ամենամեծ ռուս մտածողներից մեկն էր, որի վիթխարի գիտական ժառանգությունը արդի պայմաններում պահպանել է իր հսկայական ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը: Գիտնականի առաջին տիկնոջ՝ մաթեմատիկական գիտությունների դոկտոր Վ. Մ. Լոսևայի բնութագրմամբ. «Լոսևը ամենաբարդ ֆիգուրներից մեկն է ոչ միայն մեզ մոտ, այլև Արևմուտքում: Նրա մեջ միշտ հաշտ ու համերաշխ ապրում էին այնքան տարբեր տենդենցներ, գաղափարներ և մեթոդներ, որ իր գրածը միայն չնչին աստիճանի է արտացոլում իր իրական փիլիսոփայական կյանքը: Կարելի է ասել, որ դրանք իր վիթխարի փիլիսոփայական սիմֆոնիայի միայն չնչին ակորդներն են, և ինքը՝ Լոսևը, զգում էր իրեն այնպես, որ իրապես դեռ չի սկսել իսկականից փիլիսոփայավարի գրել: Դրա հետ մեկտեղ, նա հենց այդ ավարտող, ամփոփող ուղեղներից մեկն է: Այսպիսի փիլիսոփաներ միշտ հայտնվում են մեծ դարաշրջանների վերջում նրա համար, որ համակարգեն մտքի դարավոր աշխատանքը և ստեղծեն մահացող մշակույթի գույքացուցակը՝ կառուցման ընթացքում գտնվող նոր մշակույթին փոխանցելու համար»: Բնութագրելով Ա. Լոսևի մեթոդը, Վ. Մ. Լոսևան գրում է. «Լոսևի մեթոդը խիստ դիալեկտիկական է:

Այն, որ այս մեթոդը իր համար բնական է, և նա դրանով նվաճում է ինչպես վիրտուոզ դաշնակահար, ընդունում են նույնիսկ իր թշնամիները: Ոչ միայն Ս. Լ. Ֆրանկն է խոստովանում, որ «Հեգելի «Ոգու ֆենոմենոլոգիայից» հետո գրեթե չեն հայտնվել աշխատություններ այսպիսի խոր դիալեկտիկայով, ինչպիսին է Լոսևի «Անունի փիլիսոփայությունը», այլև Ա. Դեբորինն է համաձայն, որ այն իսկական դիալեկտիկա է, չնայած ոչ մատերիալիստական»:

Հայ մշակույթի պատմությունը ունի այլ մշակույթների մտավոր նվաճումները թարգմանելու և յուրացնելու բազմաթիվ հաջողված օրինակներ: V դ. սկզբից մինչև մեր օրերը շարունակվող Թարգմանչաց շարժումը ներառում է ոչ միայն թարգմանության, այլև իմաստավորման և յուրացման ֆենոմենները: Աստվածաշունչ մատյանի թարգմանությունից մինչև Հոմերոսի և Շեքսպիրի անմահ երկերի ամբողջական թարգմանությունները, այս գլուխգործոցները «հայացվել» են՝ դարձել մեր մշակույթի և մտածողության անքակտելի մասը:

Մեր սահմանափակ հնարավորությունները ստիպում են մեզ համաշխարհային գրականության օվկիանոսից խստորեն ընտրել և թարգմանել միայն ամենակարկառուն հեղինակների ստեղծագործությունները: Աշխարհում կան բազմաթիվ գիտնականներ և գրողներ, որոնց բոլոր աշխատությունները ցանկալի է, որ ներկայացված լինեն հայերեն: Այդպիսին էին վերը նշված Հոմերոսը և Շեքսպիրը: Ալեքսեյ Լոսևի գիտական և, ընդհանրապես, գրական ժառանգության թարգմանությունը հայերեն, նրա ստեղծագործությունների խոր վերլուծությունը հզորագույն խթան կհանդիսանան ոչ միայն գիտական, այլև ընդհանրապես մտավոր աշխատանքից չխորշող ողջ հայախոս հասարակության համար: Հումանիտար գիտությունների բնագավառում այսօր չի երևում մեկ այլ խոշոր ռուս մտածող, որը կկարողանար մրցել Ալեքսեյ Լոսևի հետ: Ժամանակակիցները Լոսևին համարում էին XX դարի ամենախոշոր էնցիկլոպեդիստներից մեկը: Նրա գիտական հետաքրքրությունների բազմազանությունը և վիթխարի գրական ժառանգությունը ապշեցնում

են. փիլիսոփայություն, դիալեկտիկա, տրամաբանություն, մաթեմատիկայի տրամաբանա-փիլիսոփայական հիմքեր, գեղագիտություն, դիցաբանություն, բանասիրություն, կենսագրագիտություն, նաև թարգմանչություն՝ հիմնականում դասական լեզուներից, պատմաբանություն, աստվածաբանություն, երաժշտության տեսություն և դասախոսություն: Մեր հոգևոր մշակույթի պատմության մեջ մենք այսպիսի մեծ թարգմանական նախագիծ դեռ չենք իրականացրել: Հաջողության հասնելու համար նրա երկերի հայերեն թարգմանությունները անհրաժեշտ է իրականացնել մի քանի փուլով՝ առաջնահերթություն տալով հեղինակի ամենակարևոր աշխատություններին: Մնացածը ապագայի խնդիր է: Մինչև այսօր Ռուսաստանում դեռ հավաքում են տարբեր պարբերականներում սփռված Լոսևի բազմաթիվ հոդվածները, հսկայական արխիվներից հայթայթում ձեռագիր ժառանգության նոր պատառիկներ, որոնք ժամանակ առ ժամանակ հրատարակվում են: Այս վիթխարի ժառանգության հավաքումը, հայերեն թարգմանումը և համապատասխան մեկնաբանություններով պատշաճ գիտական հրատարակումը, չի բացառվում նաև մասնագետների ուղեկցող հոդվածներով, կարող են ամփոփվել առնվազն 50, եթե ոչ 60 ստվարածավալ հատորներում: Այսպիսի նախագիծը անհրաժեշտ է իրագործել մի քանի փուլերով.

- ամենակարևոր, առանցքային ստեղծագործությունները,
- կարևոր ստեղծագործությունները,
- այլ ստեղծագործություններ,
- ընթացքում բաց թողնված մնացած գործերը:

Ա. Լոսևի ստեղծագործության նման «դասակարգումը» խիստ սուբյեկտիվ է, սակայն հնարավորություն է տալիս կողմնորոշվելու իր ստեղծածի հսկայական «պահեստում»:

I. Ա. Լոսևի ամենակարևոր, առանցքային ստեղծագործությունները

Լոսևի ամենակարևոր, առաջնահերթ թարգմանությանը ենթակա ստեղծագործությունն է «Անտիկ էսթետիկայի պատմություն» ութհատորյակը (տասը գրքով).

1. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Վաղ դասականությունը. 1963 թ. 584 էջ (վերահրատարակվել է 2000 թ., 624 էջ),
2. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Սոփեստները, Սոկրատեսը, Պլատոնը. 2000 թ., 846 էջ,
3. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Բարձր դասականությունը. 1974 թ., 600 էջ (վերահրատարակվել է 2000 թ.),
4. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Արիստոտելը և ուշ դասականությունը. 1975 թ. 776 էջ (վերահրատարակվել է 2000 թ.),
5. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Վաղ հելլենականություն. 1979 թ., 816 էջ (վերահրատարակվել է 2000 թ.),
6. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Ուշ հելլենականություն. 1980 թ., 768 էջ,
7. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Վերջին դարեր. Գիրք I. 2000 թ., 512 էջ,
8. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Վերջին դարեր. Գիրք II. 2000 թ., 544 էջ,
9. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Հազարամյա զարգացման արդյունքները. Գիրք I. 2000 թ., 832 էջ,
10. Անտիկ էսթետիկայի պատմությունը. Հազարամյա զարգացման արդյունքները. Գիրք II. 2000 թ., 688 էջ:

Այս հսկայական, ավելի քան 7 000-էջանոց աշխատությունը հայերեն թարգմանելուց հետո կկազմի մոտ 16 ստվար հատոր:

Վերջինիս լրացումն ու շարունակությունն են.

1. Հելլենիստական հռոմեական էսթետիկա. 2010 թ., 704 էջ
2. Վերածննդի էսթետիկա. 1978 թ. 624 էջ,
3. Անտիկ փիլիսոփայության պատմությունը կոնսպեկտիվ շարադրությամբ. 1989 թ., 208 էջ,
4. Պատմության անտիկ փիլիսոփայությունը. 1977 թ., 208 էջ,
5. Անտիկ փիլիսոփայության բառարան. ընտիր հոդվածներ. 1995 թ., 232 էջ (կարելի է թարգմանել բոլոր հոդվածները),

6. Դավիթ Անհաղթի պատմափիլիսոփայական սխրանքը. 1980 թ., 13 էջ:

Այս պատկառելի, մոտ 2 000 էջ կազմող աշխատությունները հայերեն թարգմանելուց հետո կկազմեն 4 հատոր: Այսպիսով՝ Լոսևի ամենակարևոր, առանցքային ստեղծագործությունների ծավալը շատ մեծ է լինելու՝ հայերենով մոտ 20 մեծածավալ հատոր:

Լոսևի «Անտիկ էսթետիկայի պատմություն» տասը հատորյակը իրականում նվիրված է ոչ միայն և ոչ այնքան գեղագիտությանը, որքան ամբողջ անտիկ փիլիսոփայությանը: Սպառիչ կերպով ներկայացված ու խորը վերլուծված է անտիկ փիլիսոփայության զարգացման մոտ 1500-ամյա ընթացքը: Լոսևը փիլիսոփայության պատմությունը ներկայացնում է անտիկ աշխարհի հիմնական պատմական իրադարձությունների ֆոնին: Անվանման փոփոխությունը՝ փիլիսոփայություն տերմինի փոխարեն՝ գեղագիտություն, Ա. Լոսևը կատարել էր, որպեսզի կարողանար խուսափել Խորհրդային Միությունում գործող խիստ գրաքննությունից, գաղափարախոսական սահմանափակումներից և հնարավորություն ստանար տպագրելու այս աշխատությունը:

Այս աշխատությունը մտահղացման խորությամբ, ոլորտի բոլոր ճյուղավորումների ընդգրկումով, թեմաների մշակման մանրախնդրությամբ, հայտնած գաղափարների նորությամբ աննախադեպ երևույթ էր թե՛ ռուսական, թե՛ եվրոպական գիտության համար: Հին աշխարհի անտիկ ժամանակաշրջանի փիլիսոփայությունը՝ Ք.ա. VIII դ. կեսից մինչև Ք.հ. VII դ. առաջին երրորդը, ներկայացվել էր կուռ դիալեկտիկական և տրամաբանական համակարգով: Ա. Լոսևի ջանքերով հունա-հռոմեական քաղաքակրթության հոգևոր կյանքի կարևոր ոլորտներից մեկը ավարտուն տեսք ընդունեց: Եվրոպայում այս բազմահատորյակը ամենաբարձր գնահատականների արժանացավ:

«Անտիկ ժամանակաշրջանի պատմություն» և «Անտիկ փիլիսոփայություն» առարկաները ուսումնասիրող հայ ուսանողների (և հետաքրքրասեր լայն հանրության) համար այս բազմահատորյակի ուսումնասիրությունը առայսօր լավագույն և ամենակարճ մուտքը

կդառնա դեպի նշված մասնագիտություններ: Աշխատության ուսումնասիրությունը որոշակի համառություն և մտավոր զարգացման մակարդակ է պահանջում, սակայն, յուրացնելով գրքում ներկայացված հսկայական նյութը և սովորելով հեղինակի կիրառած մեթոդը, համարձակ կարելի է ուսումնասիրել սույն բնագավառի այլ, այդ թվում՝ ամենաբարդ աշխատությունները: Անշուշտ, մասնագետ դառնալու համար նաև պետք ծանոթանալ և յուրացնել ուրիշ գիտնականների մոտեցումները ևս, ապա փորձել ինքնուրույն ստեղծագործել ընտրած բնագավառում, սակայն Լոսևի բազմահատորյակի ուսումնասիրությունը առայսօր մնում է «հին աշխարհի փիլիսոփայություն» մասնագիտությանը տիրապետելու ամենակարճ ճանապարհներից մեկը:

Լոսևը չի սահմանափակվում անտիկ գեղագիտության (փիլիսոփայության) պատմությանը նվիրված սույն բազմահատորյակով: Նրա միտքը անընդհատ վերադառնում և հետազոտում է այս ժամանակաշրջանին վերաբերող տարբեր հարցերի նրբերանգները[12,15,16]: Երբեմն Լոսևի միտքը դուրս է գալիս անտիկ աշխարհի շրջանակներից և հետազոտում հարակից խնդիրները: Լոսևի «Վերածննդի էսթետիկան», «Վերածննդի էսթետիկայի պատմական իմաստը» ստեղծագործությունները իր «Անտիկ էսթետիկայի պատմություն» գրքի տրամաբանական շարունակությունն են[11,25,26]: Լոսևը ապացուցում էր, որ չնայած վաղ և միջին միջնադարում փիլիսոփայական մտքի զարգացումը որոշակիորեն դանդաղել և թուլացել էր, սակայն երբեք չէր ընդհատվել: Վերածննդի մտքի հսկաները հիմնվել են նախորդ դարերի մտավոր ժառանգության վրա և, այդպիսով, ապահովել զարգացման անընդհատականությունը:

II. Ա. Լոսևի կարևոր ստեղծագործությունները

Երկրորդ փուլում անհրաժեշտ է հայերեն թարգմանել հետևյալ կարևոր ստեղծագործությունները.

1. «Միֆի դիալեկտիկա». «Միֆի դիալեկտիկա»-ի հավելված. 2022 թ., 696 էջ,

2. «Անվան դիալեկտիկա». 1990 թ., 272 էջ,
3. Քաոս և ստրուկտուրա (Մաթեմատիկայի դիալեկտիկական հիմքերը. Մաթմատիկա և դիալեկտիկա). 1997 թ., 832 էջ,
4. Ա. Ա. Տախո-Գոդի. Լոսև. կենսագրություն. 2-րդ հրատ. 2007 թ., 534 էջ (այս բաժնում նպատակահարմար ենք գտնում հայերեն թարգմանել նաև Ա. Լոսևի երկրորդ կնոջ և աշխատանքային ընկերոջ՝ անվանի գիտնական Ազա Ալիբեկովնա Տախո-Գոդիի մենագրությունը ամուսնու մասին):

Այս պատկառելի, մոտ 2340 էջ կազմող աշխատությունները հայերեն թարգմանելուց հետո կկազմեն 4 հատոր:

III. Ա Լոսևի այլ ստեղծագործությունները

Երրորդ փուլում անհրաժեշտ է հայերեն թարգմանել հետևյալ ստեղծագործությունները.

1. Գոյություն – անուն – տիեզերք. 1993 թ., 958 էջ,
2. Անտիկ սիմվոլիզմի և դիցաբանության ակնարկներ. 1993 թ., 960 էջ,
3. Միֆ – թիվ – էություն. 1994 թ., 920 էջ,
4. Զև. Ոճ. Արտահայտություն. 1995 թ., 944 էջ,
5. Հույների և հռոմեացիների դիցաբանությունը. 1996 թ., 976 էջ,
6. Անձ և Աբսոլյուտ. 1999 թ., 720 էջ,
7. Պլատոն. Արիստոտել. 1993 թ., 384 էջ (Ա. Ա. Տախո-Գոդիի հետ համատեղ),
8. Արիստոտել. Իմաստի որոնումներ. 2014 թ., 314 էջ (Ա. Ա. Տախո-Գոդիի հետ համատեղ),
9. Նիկոլայ Կուզանցին թարգմանություններում և մեկնաբանություններում. երկու հատորով. Հատոր առաջին. 2016 թ., 728 էջ,
10. Նիկոլայ Կուզանցին թարգմանություններում և մեկնաբանություններում. երկու հատորով. Հատոր երկրորդ. 2016 թ., 520 էջ:

Այս ստվար, ավելի քան 6 500 էջ կազմող աշխատությունները հայերեն թարգմանելուց հետո կկազմեն 16 հատոր:

IV. Ա. Լոսևի հրատարակություններից բաց թողնված մնացած գործերը

Չորրորդ փուլում անհրաժեշտ է հայերեն թարգմանել հետևյալ ստեղծագործությունները.

1. Վլադիմիր Սոլովյովը և իր ժամանակը. 1990 թ., 720 էջ,
2. Բնության էսթետիկա. բնությունը և նրա ոճային ֆունկցիաները Ռոմեն Ռոլանի մոտ (Ա. Ա. Տախո-Գոդիի հետ համատեղ), 2006 թ., 424 էջ,
3. Հոմերոսի կենսագրությունը,
4. Դիոգենես Լաերտացու կենսագրությունը,
5. Տարբեր գրքեր, հոդվածներ, հնարավոր է նաև նամականի՝ ավելի քան 3500 էջ:

Այս ստվար, ավելի քան 5 000 էջ կազմող աշխատությունները հայերեն թարգմանելուց հետո կկազմեն 10 հատոր:

«Ալեքսեյ Լոսևը հայերեն» հիմնադրամի գործունեության ուրվագիծ

Նախագիծը իրականացնելու համար անհրաժեշտ են թարգմանիչներ, գիտական խմբագիրներ, հնարավորության դեպքում՝ ծանոթագրություններ կազմողներ, մատենաշարի գեղարվեստական ձևավորողներ: Այս ամենը պահանջում է որոշակի կազմակերպություն կամ հիմնադրամ:

Անհրաժեշտ է ստեղծել «Ալեքսեյ Լոսև» հիմնադրամ, կազմել խմբագրական հանձնաժողով, ընդգրկել 20–25 հմուտ թարգմանիչներ. յուրաքանչյուր հատորը պետք է ունենա իր խմբագիրը: Ցանկալի է աշխատանքի առաջին փուլը ավարտել 4–5 տարում: Նախագծի արժեքը, հավանաբար, կտեղավորվի 3 մլն ԱՄՆ դոլարի շրջանակում:

Այս նախագծի առաջին փուլի հաջող ավարտը կստեղծի թարգմանչական հզոր կոլեկտիվ, որի շնորհիվ հնարավոր կլինի 5-10 տարում կատարել հաջորդ փուլերի գրքերի բարձրորակ թարգմանութ-

յուններ: Այդպիսով՝ 10-15 տարում հնարավոր կլինի ավարտել Լոսևի «Երկերի լիակատար ժողովածուի» հրատարակությունը:

Ա. Ֆ. Լոսևի «Երկերի ժողովածուն» անհրաժեշտ է հրատարակել նվազագույն 300 տպաքանակով, նաև բացել բաժանորդագրություն, որը կարող է տպաքանակը ավելացնել մինչև 500 օրինակ: Համացանցի տարբեր կայքերում անհրաժեշտ է անվճար տեղադրել հատորների բարձրորակ pdf և djvu ֆայլերը:

10-15 տարում Ա. Ֆ. Լոսևի 50-հատորանոց երկերի ժողովածուի հայերեն հրատարակումը կնպաստի համամարդկային նշանակություն ունեցող տարբեր ծավալուն հումանիտար և գիտատեխնիկական տեղեկատվական նյութերը արագ հայացնելու գործընթացին: Նեյրոցանցային համակարգերի օգտագործման դեպքում այս գործընթացը խիստ կարագանա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Лосев А. Ф. История античной эстетики: Т.1.Ранняя классика. - М.: ООО «Издательство АСТ»; Харьков: Фолио, 2000. - 624 с. (Вершины человеческой мысли).
2. Лосев А. Ф. История античной эстетики: Т.2. Софисты. Сократ. Платон. - М.: ООО «Издательство АСТ»; Харьков: Фолио, 2000. - 846 с. (Вершины человеческой мысли).
3. Лосев А. Ф. История античной эстетики: Т.3. Высокая классика. - М.: ООО «Издательство АСТ»; Харьков: Фолио, ... - ... с. (Вершины человеческой мысли).
4. Лосев А. Ф. История античной эстетики: Т. 4. Аристотель и поздняя классика. - М.: ООО «Издательство АСТ»; Харьков: Фолио, ... - ... с. (Вершины человеческой мысли).
5. Лосев А. Ф. История античной эстетики: Т. 5. Ранний эллинизм. - М.: ООО «Издательство АСТ»; Харьков: Фолио, ... - ... с. (Вершины человеческой мысли).
6. Лосев А. Ф. История античной эстетики: Т. 6. Поздний эллинизм. - М.: ООО «Издательство АСТ»; Харьков: Фолио, ... - ... с. (Вершины человеческой мысли).
7. Лосев, А. Ф. История античной эстетики. Т. 7. Последние века. Книга I. - Харьков: Фолио; М.: ООО «Издательство АСТ», 2000. - 512 с. (Вершины человеческой мысли).
8. Лосев, А. Ф. История античной эстетики. Т. 7. Последние века. Книга II. - Харьков: Фолио; М.: ООО «Издательство АСТ», 2000. - 544 с. (Вершины человеческой мысли).
9. Лосев, А. Ф. История античной эстетики. Итоги тысячелетнего развития. Т. 8. Книга I. - Харьков: Фолио; М.: ООО «Издательство АСТ», 2000. - 832 с. (Вершины человеческой мысли).
10. Лосев, А. Ф. История античной эстетики. Итоги тысячелетнего развития. Т. 8. Книга II. - Харьков: Фолио; М.: ООО «Издательство АСТ», 2000. - 688 с. (Вершины человеческой мысли).
11. Лосев, А. Ф. Эстетика Возрождения. - М.: «Мысль», 1978. - 624 с.
12. Лосев, А. Ф. Эллинистически-римская эстетика I–II вв. н.э. - М.: Издательство Московского университета, 1979. - 416 с.
13. Лосев А. Ф., Тахо-Годи М. А. Эстетика природы (Природа и ее стилевые функции у Ромена Роллана). Отв. ред. А. А. Тахо-Годи, Е. А. Тахо-Годи. - М.: Изд-во «Наука», 2006. - 424 с., ил.(Лосевские чтения).
14. Лосев, А. Ф. Философия имени. - М.: Изд-во Московского ун-та, 1990. - 272 с.
15. Лосев, А. Ф. История античной философии в конспективном изложении. - М.: «Мысль», 1989. - 208 с.
16. Лосев, А. Ф. Античная философия истории. - М.: Изд-во «Наука», 1977. - 208 с. (АН СССР, серия «Из истории мировой культуры»).
17. Лосев, А. Ф. Диалектика мифа. Дополнение к «Диалектике мифа». - М.: Изд-во «Мысль», 2001. - 560 с. (Философское наследие, том 130).
18. Лосев, А. Ф. Очерки античного символизма и мифологии. - М.: Изд-во «Мысль», 1993. - 960 с. (Вторая из серии книг, включающих ранние произведения А. Ф. Лосева).

19. Лосев, А. Ф. Хаос и структура. - М.: Изд-во «Мысль», 1997. - 832 с. (Шестая из серии книг, включающих ранние произведения А. Ф. Лосева).
20. Лосев, Алексей. Владимир Соловьев и его время. - М.: «Прогресс», 1990. - 720 с.
21. Лосев А. Ф., Тахо-Годи, А. А. Платон. Аристотель. Издание 3-е, исправленное и дополненное. - М.: Молодая гвардия, 2005. - 392 с, 8 л. ил. (Жизнь замечательных людей; Серия биографий; Вып. 947).
22. Лосев А. Ф. Диоген Лаэртский – историк античной философии. Издание 3-е, исправленное и дополненное. - М.: Издательство «Наука», 1981. - 192 с. (Серия «Из истории мировой культуры»).
23. Лосев А. Ф. Философско-исторический подвиг Давида Непобедимого: доклад. Ереван, Изд-во АН АрмССР, 1980. - 13 с.
24. Лосев А. Ф. Словарь античной философии: Избранные статьи. - М.: Издательство «Мир идей», АО АКРОН, 1995. - 232 с.
25. Лосев А. Ф. Николай Кузанский в переводах и комментариях: В 2-х томах. Том 1. - М.: Издательский Дом ЯСК, 2016. - 728 с.
26. Лосев А. Ф. Николай Кузанский в переводах и комментариях: В 2-х томах. Том 2. - М.: Издательский Дом ЯСК, 2016. - 520 с.
27. Лосев А. Ф. Музыка как предмет логики. Античная музыкальная эстетика. 2023. 528 с.
28. Лосев А. Ф. Методы современной логики. - статья.
29. Лосев А. Ф. Классификация искуств в немецкой эстетике. 2023. - статья.
30. А. А. Тахо-Годи. Лосев. 2-е издание, исправленное и дополненное. 2007. 534 с.

РЕЗЮМЕ

О НЕОБХОДИМОСТИ ПЕРЕВОДА НАУЧНОГО НАСЛЕДИЯ АЛЕКСЕЯ ЛОСЕВА НА АРМЯНСКИЙ ЯЗЫК

А.Ф. Лосев (1893–1988) один из великих русских мыслителей XX в. Разносторонность его интересов поражает: философия, диалектика, логика, логико-философские основания математики, эстетика, мифология, филология, история, теология, теория музыки, педагогика, переводы с разных, в том числе классических языков, художественная литература. Лосев один из величайших энциклопедистов своего времени.

Предлагается создать фонд по переводу произведений Лосева на армянский язык. Учитывая громадный объем предстоящей работы, предлагается ее осуществить в четыре этапа:

- важнейшие, ключевые произведения – 20 томов,
- важные произведения – 4 тома,
- менее важные произведения – 16 томов,
- оставшиеся произведения – 10 томов.

Необходимо создать фонд «Алексей Лосев», собрать редакционный совет, привлечь к работе 20–25 переводчиков, редакторов для каждого тома. Желательно первый этап закончить в течение 4–5 лет, для чего по-видимому необходимы средства в размере около 3 млн долларов США.

Успех первого этапа создаст мощный коллектив опытных переводчиков, благодаря чему остальные три этапа можно осуществить в течение 5–10 лет.

Минимальный тираж Собрания сочинений — 300 комплектов, а также предварительная подписка, что позволит увеличить тираж до 500 комплектов. Все тома в виде pdf и djvu файлов бесплатно должны быть доступны в интернете.

Успех данной программы стимулирует множество проектов по переводу на армянский язык гуманитарной и научно-технической литературы. Использование нейросетевых возможностей ИИ намного облегчит и ускорит этот процесс.

ABSTRACT

ON THE NECESSITY OF TRANSLATION OF ALEXEY LOSEV'S SCIENTIFIC LEGACY INTO ARMENIAN

A.F. Losev (1893–1988) was one of the great Russian thinkers of XX century. The diversity of his interests was striking: philosophy, dialectics, logic, logical and philosophical foundations of mathematics, aesthetics, mythology, philology, history, theology, music theory, translations from various, including classical, languages and fiction. He was one of the greatest encyclopedists of his time.

A fund for the translation of Losev's works into Armenian is proposed to create. Considering the enormous volume of the upcoming work, it should be carried out in four stages:

1. the most essential, key works - 20 volumes,
2. important works - 4 volumes,
3. less important works - 16 volumes,
4. the remaining works - 10 volumes.

After creating the Alexey Losev Foundation, an editorial board is expected to be assembled, involving 20–25 translators and editors for each volume. The first stage should preferably be completed within 4–5 years, with funds of approximately US $3 million apparently needed.

The success of the first stage will create a powerful team of experienced translators, thanks to which the remaining three stages can be finished within 5-10 years. The minimum print run of the Collected Works is 300 sets, as well as a preliminary subscription, which will increase the print run to 500 sets. All volumes in the form of pdf and djvu files

should be available free of charge on the Internet. The success of this program can stimulate many projects on translation of humanitarian and scientific-technical literature into Armenian. The use of neural network capabilities of AI will greatly facilitate and speed up this process.

Հոդված 4.

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԲԱԶՄԱՀԱՏՈՐՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր. *հնադարի պատմություն, հնադարի ռազմական պատմություն, «Հայոց պատմություն» բազմահատորյակ, Առաջին հատորի երկրորդ գրքի արժանիքները, Առաջին հատորի երկրորդ գրքի վրիպակները, ժամանակակից պատմագիտությունը Հայաստանում:*

«Չեմ վիճում այն մարդկանց հետ,
որոնց համար վեճում ճևական
հաղթանակը ավելի կարևոր է,
քան ճշմարտության որոնումը»:
Արա Գևորգյան,
17.12.2007 թ.

2024 թ. աշնան վերջին հրատարակվեց երկար սպասված «Հայոց պատմություն» բազմահատորյակի առաջին հատորի երկրորդ գիրքը[5]: Հուսով եմ, որ շուտով՝ 2025 թ., լույս կընծայվի վերջին չհրատարակված՝ Առաջին հատորի առաջին գիրքը և ՀՀ ԳԱԱ կկարողանա 15 տարում (2010–2025 թթ.) ամբողջացնել «Հայոց պատմություն» բազմահատորյակի ութ գրքերը: Հիշեցնեմ, որ «Հայ ժողովրդի պատմության» առաջին ակադեմիական ութհատորյակի հրատարակումը տևեց 17 տարի (1967–1984 թթ.):

Ընթերցողը առաջին տպավորությունը նոր տպագրված գրքից ստանում է առաջին անգամ այն բացելիս: 1-ին հատորի երկրորդ գրքին նախորդող երկու հրատարակված հատորները՝ 4-րդ հատոր, գիրք երկրորդը (2016 թ.) և 2-րդ հատոր, գիրք առաջինը (2018 թ.) անսպասելիորեն տպված էին շատ ավելի խոշոր տառաչափերով,

քան նախորդ չորս հատորները: Առաջին չորս հատորների տառատեսակները և տառաչափերը լրիվ համապատասխանում էին սույն հրատարակության նպատակներին և շատ հաճելի էին ընկալվում: Գրախոսվող վերջին՝ 1-ին հատորի երկրորդ գրքում (2024 թ.) նախորդ երկուսի տառաչափերի խայտառակ չափը մի քիչ փոքրացրել են, սակայն չեն հասել առաջին չորս հատորների ստանդարտին: Սրանով ապահովել են պարտադիր նվազագույն 700 էջ ծավալը (698 էջ): Ենթադրում եմ, որ բազմահատորյակը տարբեր մեծության տառաչափերով էր տպվել գրքի նույնանման արտաքին տեսքը ստանալու համար:

Այս ամենը զարմանալի է: Համոզված եմ, որ մեր գիտականները, պահպանելով բարձր գիտական մակարդակ, ունակ էին 1-ին հատորի երկրորդ գրքում շարադրված Ք.ա. IX դարից մինչև Ք.հ. III դարի պատմությունը ներկայացնել երկու ստվարածավալ 1000-էջանոց բարձրորակ հատորներով: Գրքի բաժինների ծավալը որոշվում է կանխավ, պլանավորման փուլում: Մեր գիտնականները կոմպետենտ են ցանկացած աստիճանի մանրամասնությամբ շարադրել պատմական նյութերը: Ավելի սպասելի էր, որ հեղինակները ունենային հակառակ խնդիրը՝ չտեղավորվեին առաջարկված ծավալների մեջ, և գիրքը նախատեսված 700 էջի փոխարեն ընդլայնվեր մինչև առաջին չորս հատորների մանր տառաչափերով 800–900 էջ: Հասկանալի չէ, ինչո՞ւ այսպես տեղի չունեցավ:

«Հայոց պատմություն» բազմահատորյակի առաջին հատորի երկրորդ գիրքը շարադրված է լավ հայերենով: Հաճելի է, որ բաժինների վերջում որոշ վերլուծության փորձ է կատարվում: Գիրքը արտացոլում է արդի պատմական գիտության հիմնական նվաճումները և ընթերցվում է հաճույքով:

Դժբախտաբար, գրքում առկա են որոշ վրիպակներ և սխալներ: Ներկայացնենք մի քանիսը.

Օրինակ՝ էջ 71-72-ում հեղինակները գրում են. «Արքայական զորաբանակի մարտիկների թիվը շուրջ 20000 էր, որոնց արշավան-

քի ժամանակ միանում էին փոխարքաների ուժերը: Զինված ուժերի ընդհանուր քանակը հասնում էր շուրջ կես միլիոնի, այն դեպքում, երբ պետության բնակչության ազատ մարդկանց թիվը գերազանցում էր հինգ միլիոնը: Բանակը կազմված էր 6 000-անոց գնդերից, որոնք ունեին իրենց ստորաբաժանումները»:

Վերլուծենք վերը շարադրվածը:

Առաջինը Ուրարտուի բանակի կեսմիլիոնանոց կազմի մասին: Դիմենք Հին Հռոմի պատմությանը. Ք.ա. IV դ. սկզբին Հռոմը և իր դաշնակիցները ենթարկվեցին գաղիական ցեղերի հուժկու հարձակմանը: Մի շարք աննշան ճակատամարտեր ավարտվեցին հռոմեացիների պարտությամբ, և նրանք փորձեցին գնահատել իրենց մարդկային ռեսուրսները: Պարզվեց, որ հռոմեացիները իրենց բոլոր դաշնակիցների հետ միասին ունեն ավելի քան 700000 տղամարդ, որոնք ունակ էին զենք վերցնելու: Ք.ա. 390 թ. (ըստ Տիտուս Լիվիուսի) կամ 387 թ. (ըստ Պոլիբիոսի) հուլիսի 18-ին Հռոմից ոչ հեռու՝ Ալլիայի մոտ, մեծ ճակատամարտ տեղի ունեցավ, որտեղ գաղիական սեննոն ցեղի մարտիկները գլխովին ջախջախեցին հռոմեական բանակը և պաշարեցին Հռոմը: Կողմերի ուժերը գնահատվում էին՝ գաղիացիները մոտ 70000, հռոմեացիները՝ 24000-ից մինչև ավելի քան 40000: Ռազմական պատմաբանների վերջին տարիներին կատարած վերլուծությունը ցույց տվեց, որ իրականում գաղիացիների 30 000-անոց բանակը բախվել էր 15000-անոց (10000 ծանրազեն և 5000 թեթևազեն հետևակ) հռոմեականի հետ: Ինչու եմ այսքան մանրամասնում այս դրվագը: 700000 պոտենցիալ զենք կրող ունենալը ամենևին չի նշանակում, որ նրանցից կարելի է կազմել 350000-անոց բանակ: Սա մոլորություն է, իրականում՝ 40000, ավելի հավանական է 15000 զինվոր:

Արդյոք Հին աշխարհում եղել են նման մեծաքանակ բանակներ: Անշուշտ, կարող ենք հիշել՝ ում մոտ և երբ կային հեղինակի նշած հսկայական՝ 500000 և ավելի զինված ուժերը (դաշտային բանակները հին աշխարհում շատ հազվադեպ էին գերազանցում 100000 զինվորը):

- Հռոմեական կայսրություն I–III դդ.՝ 65 միլիոն բնակչություն և 350000–600000 զինված ուժեր,
- Չինական Խան կայսրություն Ք.ա. II – Ք.հ. II դդ.՝ 60 միլիոն բնակչություն և 400000–600000 զինված ուժեր,
- Գուպտերի կայսրությունը Հնդկաստանում, Չանդրագուպտայի ժամանակ – Ք.հ. IV դ. սկիզբ՝ 40 միլիոն բնակչություն, զինված ուժերը՝ 600000 հետևակ, 30000 հեծելազոր, 8000 մարտակառք և 9000 մարտական փիղ:

Սրանց կարող ենք գումարել Աքեմենյան տերությունը իր ավելի քան 312 հզր զինված ուժերով, Տիգրան Բ Մեծի տերությունը՝ մոտ 260–300 հզր զինված ուժերով (դաշնակիցների հետ միասին), կամ Միհրդատ Զ Եվպատորի Պոնտոսի տերություն՝ ավելի քան 200 –300 հզր զինյալներով (դաշնակիցների հետ միասին):

Լուրջ վրիպակ է այս շարքում ընդգրկել անհամեմատ ավելի համեստ կարողություն ունեցող Բիայնիլին և վկայում է այն մասին, որ հեղինակները, լինելով գերազանց պատմաբաններ իրենց նախընտրած բնագավառներում, բավականին հեռու են հին աշխարհի ռազմական պատմություն գիտակարգի հիմնական հասկացությունների իմացությունից:

Ուրարտուի վաղ շրջանի ռազմական պատմության որոշ դրվագներ ևս հարցեր են առաջացնում: Այս հարցերը կարող են քննարկվել ապագայում, և տարբեր լուծումներ առաջարկվել, սակայն Ուրարտուի 500 000-անոց բանակի մասին գրվածը բացահայտ թյուրիմացություն է և պետք է ուղղվի:

Անցնենք էջ 337–338-ին՝ Ք.ա. 69–67 թթ. հայ-հռոմեական պատերազմի որոշ դրվագների վերլուծությանը: (Իրականում պատերազմը տևել է մինչև 66 թթ., երբ Տիգրան Բ Մեծի և Գնեուս Պոմպեուս Մագնի միջև պայմանագիր է կնքվել):

Հեղինակները նկարագրում են Տիգրանակերտի ճակատամարտը. «Ոչ լայնարձակ տեղանքում բանակը պետք է դասավորվեր մեծ ռազմասյան ձևով՝ առջևում հեծելազորը, որի կենտրոնում Տիգրան Մեծն էր իր այրուձիով, թևերին՝ Ադիաբենեի և Ատրպատականի

արքաները՝ իրենց ուժերով, նրանց հետևից բազմազգ հետևակը, վերջում՝ գումակայինների, սպասավորների և սակրավորների կուռ ((՞)-ը՝ հեղինակի) բազմությունը: Այսպիսի խոր և հոծ դասավորությամբ հնարավոր էր խորտակիչ հարված հասցնել հակառակորդին (ինչպես հասցնել - ըստ հեղինակի): Ճակատամարտը, սակայն, սկսվեց հռոմեական կողմի գրոհով, մինչև հայկական կողմը կհասցներ ընդունել մարտական դասավորություն. 15-հազարանոց հռոմեական հեծելազորը (թրակիացիներ, գալաթներ, մակեդոնացիներ, հռոմեացիներ) մարտի բռնվեց հայկական հեծելազորի առջևի շարքերի հետ: Նույն պահին 18 հազար հռոմեացի հետևակային (3 լեգեոն), հակառակորդի համար աննկատ մնալով, Լուկուլլուսի գլխավորությամբ իրականացրեց նրա դիրքերի ուղղությամբ խոր, շրջանցային մանևր և գրավեց թիկունքում բարձունքը, որտեղից գրոհեց հայկական գումակայինների վրա՝ նրանց շպրտելով դեռ մարտական դասավորություն ընդունող հետիոտների զանգվածի մեջ»: Իրականության հետ ոչ մի աղերս չունեցող, սկզբից մինչև վերջ հնարած ֆանտաստիկ տեսարան:

Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին կայացած Տիգրանակերտի ճակատամարտի մասին (ինչպես և 68 թ. Արածանիի ճակատամարտի մասին) հունա-հռոմեական բազմաթիվ սկզբնաղբյուրներում պահպանվել են այնքան տեղեկություններ, որոնց միջոցով հնարավոր է ճշգրիտ ձևով վերականգնել ոչ միայն բուն ճակատամարտի ընթացքը, այլև պատկերացում կազմել կողմերի մշակած ծրագրերի մասին: Ավելին, մենք տեղեկություններ ունենք ճակատամարտից առաջ հակամարտող կողմերի կատարած գրեթե բոլոր կարևորագույն զորաշարժերի և ռազմական բախումների մասին: Ճակատամարտի ընթացքը ավելի լավ կարելի է պատկերացնել միայն Տիգրանակերտ քաղաքի և 69 թ. ճակատամարտի տեղի վերջնական ճշտումից հետո: Միայն այս դեպքում հնարավոր կլինի տեղայնացնել ճակատամարտի ժամանակ կողմերի կատարած զորաշարժերը՝ ստանալ ճակատամարտի տոպոգրաֆիական պատկերը: Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ի Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքի մասին սպառիչ հետազոտության արդյունքները ներկայացված են 2009 թ. հրատարակված իմ հետազոտության առաջին պրակում[1]: Առանց այս մենագրությանը ծանոթանալու հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել ոչ միայն Տիգրանակերտի ճակատամարտի, այլև տիգրանյան ժամանակաշրջանի ցանկացած ռազմական դրվագի մասին[1,2,3]:

Հեղինակները պատմում են Տիգրանակերտի ճակատամարտում Լուկուլլուսի 15-հազարանոց հեծելազորի մասին: Ես հարցնում եմ՝ որտեղից են նրանք վերցրել այս անհավանական թվերը: Հռոմեական հանրապետության և պրինցիպատի Ք.ա. V դ. մինչև Ք.հ. I դ. վերջը ներառյալ (ավելի քան 500 տարի) հռոմեական բանակի հարյուրավոր անցկացրած ճակատամարտերում ՈՉ ՄԻ ԱՆԳԱՄ հռոմեական հեծելազորը 10 հազարից ավելի չի եղել[7,9,10]:

Տիգրանակերտի ճակատամարտում Լուկուլլուսը իր ձախ թևի խորը շրջանցող զորաշարժը կատարել է 24 կոհորտներով՝ 10 000 լեգեոներներով, որում ընդգրկել է ֆիմբրիական երկու լեգեոնները՝ 8 000 լեգեոներներ և ևս 4 կոհորտ՝ 2 000 լեգեոներներ: Ֆիմբրիական լեգեոնների կոհորտներում միջինում կար 400 լեգեոներ, իսկ կցված կոհորտներում՝ միջինում՝ 500: Տարբերությունը կապված էր նրա հետ, որ ֆիմբրիական լեգեոնները արդեն 18 տարի ծառայության մեջ էին և ավելի շատ կորուստներ էին կրել: Դրա հետ մեկտեղ, նրանք Լուկուլլուսի բանակի ամենամարտունակ մասն էին՝ աշխարհի ամենալավ ծանր հետևակը: Հեղինակների 18000 ծանրազեննեի թվարկումը ֆանտաստիկայի ժանրից է, հետևանք իրենց պարզամիտ պատկերացման, որ ցանկացած լեգեոն ունի 6000 զինվոր:

Ապշեցուցիչ տպավորություն են թողնում նաև Տիգրանի բանակի մարտական դասավորության մասին հեղինակների մտքի «փայլատակումները»: Այստեղ մենք գործ ունենք աշխարհի բոլոր հին ռազմական պատմությամբ զբաղվող մասնագետներին արդեն մոտ երկու դար քաջ ծանոթ հոգեբանական ֆենոմենի հետ. ռազմական գործին անծանոթ պատմաբանները չեն ընկալում բանակը որպես ֆիզիկական՝ նյութական զանգված, իր շարժվելու, հանգս-

տանալու, սնվելու, վերջապես մարտնչելու հնարավորությունների որոշակի բնական սահմանափակումներով: Այդ պատճառով ռազմական պատմությունից հեռու դիլետանտների մտքում ծնված ցանկացած անհեթեթ միտք համարվում է ճիշտ և իրագործելի. թուղթն էլ, ինչպես գիտենք, դիմանում է ցանկացած գրվածքի... Մեկ սխալ ձևակերպված մտքով, սխալ կազմած նախադասությամբ ցանկացած ոլորտի քաջատեղյակ մասնագետը բացահայտում է դիմացինի անտեղյակությունը՝ դիլետանտությունը: Բացառություն չի լինում. նույնիսկ ամենասխալ, անհեթեթ, անընդունելի մտքերը ցանկացած ոլորտի մասնագետ հայտնում է իր մասնագիտական՝ պրոֆեսիոնալ լեզվով (սլենգով): Եթե այդ լեզուն չկա, չկա նաև մասնագիտական մտածողությունը: Այդ լեզվին մեծ մասամբ տիրապետում են նաև ներկայացված ոլորտով հետաքրքրվող առաջադիմած դիլետանտները: Եթե այսպիսի ընդհանուր տեղեկատվական, հասկացողությունների և իմացաբանական դաշտ չստեղծվի, մասնագիտական շփումը կդառնա անհնար:

Հեղինակները ավարտում են Տիգրանակերտի ճակատամարտի նկարագրությունը. «Ստեղծված իրադրության մեջ կատաֆրակտոսների խնդիրն էր խուսափել կորստաբեր մարտից, ինչը նրանք հաջողությամբ իրագործեցին՝ զանգվածաբար և գրեթե անվնաս լքելով մարտադաշտը: Այս նահանջը հռոմեացիները բնորոշել են իբրև փախուստ»: Այդպես չէ: Հռոմեացի մեկ պատմաբանի քաղաքական դրդապատճառներից առաջացած գնահատականը[10] բերվում է որպես անվիճելի ճշմարտություն[5]: Իրականությունը այլ էր: Տիգրանակերտի ճակատամարտի ելքը հայկական բանակի ծանր պարտությունն էր. 10 000 սպանված, բազմաթիվ գերիներ, հպատակ թագավորների զորաբանակների փախուստը ռազմի դաշտից և դուրս գալը Տիգրանյան կայսերական բանակի կազմից: Այս ամենի հետ՝ հռոմեական բանակի կրած աննշան կորուստները, հավանաբար 1000 զինվորից ոչ ավելի: Նշեմ, որ հիմնական կորուստը կրել էր ճակատամարտը սկսած հռոմեական հեծելազորը:

Տիգրանակերտի ճակատամարտի ելքը կանխորոշված էր Տիգրան Բ Մեծի կատարած լուրջ մարտավարական սխալներով, որից հիանալի օգտվեց Լուկիուս Լուկուլլուսը: Նրա հանճարեղ ռազմավարությունը հաստատեց իր մեծագույն զորավարի համբավը. Հին աշխարհի ռազմական պատմության մեջ առաջին անգամ, հակառակորդի թևի ու թիկունքի վրա կատարվեց թևային շրջանցում և գրոհ բանակի ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՎ (մանրամասները՝ հեղինակի մենագրության առաջին պրակում): Տիգրանակերտի ճակատամարտից մի փոքր անց ընկավ և ավերվեց Տիգրանակերտը, որը այս պատերազմի ընթացքում Տիգրան Բ Մեծի տերությանը հասցված ամենածանր հարվածն էր:

Հեղինակները էջ 340-ում գրում են. «Ք.ա. 69 թ. ձմռանը Տիգրան Մեծը կատարեց Հայաստանի արական բնակչության համընդհանուր զորահավաք, անձամբ շրջագայեց Հայաստանի շատ գավառներում և հավաքեց 105 հազար մարտունակ համայնական գյուղացիներ: Նրանք տեղակայվեցին Արտաշատի մոտ՝ հայոց թագավորի բանակատեղում: Հայոց արքան հանձնարարեց Միհրդատ VI-ի զորավարներին հետևակի վարժեցումը հռոմեական լեգեոնի մարտաեղանակներին»:

Հեղինակներին թվում է, որ կարելի է վերցնել 105 000 գյուղացի, որոնց կմարզեն Միհրդատ Եվպատորի 500-600 հույն և վտարանդի հռոմեացի սպաները և կես տարի հետո կստանան հռոմեական մարտավարությունը կիրառող ծանր հետևակ, որը կկարողանա մարտնչել հռոմեական լեգեոնների դեմ: Դա միամտություն է. վերջին չորս հազար տարիների ընթացքում բանակը ստեղծվում է մեծ ջանքերով, հսկայական մտավոր և ֆիզիկական ռեսուրսների հիման վրա: Հռոմեական լեգեոնը ստեղծվում էր մի քանի տարի ծանր մարզումներից հետո[9,13,15]: Որպես օրենք, Հռոմում և համայն Իտալիայում հավաքվող նոր լեգեոնների կորիզը ռազմական փորձ ունեցող քաղաքացիներն էին, հատկապես հսկայական մարտական փորձ ունեցող վետերանները: Իրականում, Տիգրանը հավաքել էր 105000 առողջ, ուժեղ երիտասարդ տղամարդկանց, որոնցից ընտրելով մոտ

մեկ երրորդը, համալրել էր իր նոսրացած բանակի շարքերը՝ հիմնականում հետևակը: Մնացած գյուղացիները հետ էին ուղարկվել իրենց տները: Միհրդատ Եվպատորի սպաների օգնությամբ իրականացրել էր հայկական բանակի համալրված հին հետևակային գնդերի արմատական ռեֆորմ: Ծանր հետևակի գնդերի մի մասը ստացել էր լեգեոնի կառուցվածքը: 68 թ. գարնան կեսին կազմվել էր երկու բանակ: Առաջինը, գերազանցապես հեծելազորային՝ Տիգրան Մեծի և երկրորդը, մեծ մասամբ հետևակային՝ Միհրդատ Եվպատորի ղեկավարությամբ: Դաշնակիցների՝ ատրպատականցիների, իբերների և աղվանների գնդերը շարունակում էին ծառայել հայկական բանակում[7]:

Անդրադառնանք էջ 342-ին: Արածանիի ճակատամարտում հեղինակները կրկին հիշատակում են 600-հոգանոց կոհորտների մասին, չիմանալով, որ Լուկուլլուսի կոհորտները միջինում բաղկացած էին 400–500 լեգեոներներից: Նշում են ճակատամարտում Տիգրանի իրապես հիանալի մարտավարությունը, սակայն չեն նկատում Լուկուլլուսի բանակի փայլուն մարտավարական դասավորությունը: Այս ճակատամարտում Լուկուլլուսը պարտվեց, սակայն չջախջախվեց, հռոմեական բանակը պահպանեց իր մարտունակությունը և դեռ շատ վտանգավոր էր: Երեք օր հետո, երբ վրա հասավ հետ մնացած, Միհրդատի ղեկավարած հայկական երկրորդ՝ հետևակային բանակը, Լուկուլլուսը քաջ գիտակցեց, որ ձմռան շեմին Արտաշատի պաշարումը կարող է մահացու ծուղակ դառնալ հռոմեական բանակի համար, և սկսեց նահանջը: Լուկուլլուսի հայկական արշավանքը հիմնովին ձախողվեց, սկսվեց պայքար ողջ մնալու համար:

Քննենք էջ 348-ը: Հեղինակների հայ-հռոմեական պատերազմի երրորդ մեծ ճակատամարտի նկարագրությունը նույնպես թերի է, որի պատճառով տրվում են սխալ գնահատականներ: Ամենակարևորը այն եզրակացությունն է, որ ճակատամարտը երկու կողմերի համար ավարտվեց առանց վճռական արդյունքների: Իրականում, այս ճակատամարտում Լուկուլլուսն ընկել էր արքաների հմտորեն նախապատրաստած ծուղակը և պարտվել էր: Նրան փրկել էին

հռոմեական դաշտային ճամբարի մոտ լինելը, իր լեգեոներների մարտունակությունն ու տոկունությունը: Հռոմեական բանակը լիակատար պարտությունից փրկելու համար նա հարկադրված էր Տիգրանի գրոհող հեծելազորի դեմ նետել իր հեծելազորը, որը գրեթե ամբողջովին ոչնչացավ: Միայն այդպես Լուկուլլուսը կարողացավ մի փոքր դանդաղեցնել Տիգրանի հեծելազորի առաջխաղացումը, որը թույլ տվեց հռոմեական հետևակին հասնել իր ճամբարը: Ճակատամարտից հետո տեղի ունեցած իրադարձությունները հաստատում են ճակատամարտի ընթացքի իմ նկարագրությունը[2]:

Հեղինակները պատշաճ ուշադրություն չեն դարձնում Ք.ա. 69–67 (66) թթ. հայ-հռոմեական պատերազմի չորրորդ գլխավոր՝ 67 թ. Զելայի ճակատամարտին և չեն նշում նրա հսկայական նշանակությունը ինչպես պատերազմի ելքի, այնպես էլ Հին աշխարհի ռազմարվեստի զարգացման տեսանկյունից: Միհրդատ Եվպատորի հայ-պոնտական բանակը Պոնտոսում գլխովին ջախջախեց Տրիարիուսի մեծ բանակը: Միհրդատ Եվպատորը իր ժամանակի լավագույն զորավարներից մեկն էր: Օգտվելով նրանից, որ իր հակառակորդը միջակ զորավարական կարողությունների տեր զինվորական է, նա հանճարեղ ձևով օգտագործեց իր բանակի գլխավոր հարվածային ուժի՝ հայկական հեծելազորի, հատկապես կատաֆրակտների կործանիչ հարվածը, որը և կանխորոշեց Միհրդատ Զ Եվպատորի վճռական հաղթանակը:

Այսպիսով, Ք.ա. 69–67 (66) թթ. հայ-հռոմեական պատերազմի ժամանակ տեղի էին ունեցել չորս գլխավոր ճակատամարտեր. առաջինում՝ Տիգրանակերտում, Լուկուլլուսը ջախջախել էր Տիգրանի տերության բանակը, երկրորդում՝ Արածանիում, Տիգրանը հաղթել էր Լուկուլլուսին և դրանով փոխել պատերազմի ողջ ընթացքը, երրորդում՝ Աղձնիքում, Լուկուլլուսը կրկին պարտվել էր Տիգրանին ու Միհրդատին, սակայն կարողացել էր փակվել ճամբարում և խուսափել ծանր կորուստներից: Չորրորդ՝ Ք.ա. 67 թ. Զելայի (Պոնտոս) ճակատամարտում Միհրդատի հայ-պոնտական բանակը գլխովին ջախջախել էր Տրիարիուսի հռոմեական բանակը: Զելայի ճակատա-

մարտում հռոմեացիները կորցրել են ավելի շատ զինվորներ և, հատկապես, հարյուրապետներ ու տրիբուններ, քան Տիգրանը կորցրեց Տիգրանակերտի ճակատամարտում:

Հեղինակները այս ճակատամարտի նշանակությունը չեն ըմբռնում: Ռազմական արվեստի զարգացման տեսանկյունից Զելայի ճակատամարտի նշանակությունը շատ մեծ է. ռազմական պատմության մեջ առաջին անգամ հռոմեական լեգեոնները ջախջախվեցին կատաֆրակտների գնդերի ճակատային հարվածից: Հեղինակներին խորհուրդ եմ տալիս ուշադիր ընթերցել իմ մենագրության երկրորդ պրակը[2]:

Հեղինակները էջ 414-ում գրում են. «Սակայն Արտաշես Բ-ն ռազմավարական սխալ գործեց. նա վճռական գործողություններ սկսեց թշնամու դեմ: Նրա մարտական նախաձեռնությունը, թերևս, կապված էր ամրակայված բանակատեղում Արտավազդ Բ-ի և նրա հետ պահվող ավագանու գերազանցապես հեծյալ ուժերով ազատման փորձի հետ: Մարկոս Անտոնիուսին մատուցվեց հաղթելու հնարավորություն»:

Ք.ա. 34 թ. Արտաշատի մոտ տեղակայված, խրամով և ցցապատ ցանկապատնեշով պաշտպանված հռոմեական ճամբարի վրա հեծելազորով կարող էր հարձակվել միայն խոր հոգեկան խանգարում ունեցող անձը: Արտաշես Բ-ի հետագա ողջ կենսագրությունը այդպիսի խանգարման մասին չի վկայում:

Իրականում, հռոմեական ճամբարի վրա երեկոյան հարձակումը սկսել էին հայկական մեծաքանակ ծանրազեն և թեթևազեն հետևակային գնդերը, սակրավորների գնդերը, շարժական կատապուլտներով և քարնետ մեքենաներով զինված պաշարողական ստորաբաժանումները: Սրանք Տիգրանյան ժամանակաշրջանից հայտնի այն պաշարողական ստորաբաժանումներն էին, որոնք կատարելագործել էին հմուտ հույն ճարտարագետները, որոնք քաղաքների և այլ ամրացած բնակավայրերի գրավման հսկայական փորձ ունեին, որոնք կատաղի գրոհով 71 թ. գրավեցին Կորդուքի մայրաքաղաք

Փինական, իսկ 69 թ. ամռանը Տիգրանակերտի պարիսպների վրա գրոհող հռոմեացիներին այրեցին «մարտական» կրակով:

Հույն և հռոմեացի հեղինակներից մեզ հասել են անուղղակի տեղեկություններ, որ Անտոնիուսը 34 թ. Հայաստանում շատ ծանր և կարևոր ճակատամարտ էր շահել, որով շատ էր հպարտանում: Հենց այս մեծ հաղթանակի նշանակությունն էր ցանկանում նսեմացնել Օկտավիանուսի քարոզչությունը, հատկապես Հռոմեական Հանրապետության արևմտյան մասում:

Ինչ էր տեղի ունեցել: Հավանաբար, իմանալով հոր գերեվարման մասին, արդեն հայոց արքա հռչակված Արտաշես Բ-ն որոշում է գիշերային հուժկու հարձակմամբ կործանել Անտոնիուսի ողջ հռոմեական բանակը և ազատել հորը: Լինելով հմուտ զորավար, նա հռոմեական ճամբարը պաշարում է մոտակայքում նախապես կուտակած հայկական հետևակային ծանրազեն և թեթևազեն գնդերով, որոնց տեղաշարժը հռոմեական հնարավոր հարձակումներից պաշտպանում էր հայոց այրուձին: Ուշ երեկոյան հռոմեական ճամբարը արդեն բոլոր կողմերից պաշարված էր: Ըստ երևույթին, Անտոնիուսին Արտավազդ Բ-ին ազատելու վերջնագիր էր ներկայացվել, որը վերջինս մերժել էր: Հայերը սկսել էին ռմբակոծել ճամբարը քարնետներով, կատապուլտներով և հրկիզող նյութերով: Հռոմեացիների կատապուլտները և քարնետ մեքենաները պատասխան կրակ էին բացել: Հավանաբար, որոշ ժամանակ անց, հայերին հաջողվել էր լցնել խանդակի մի մասը և կործանել ճամբարի ցցապատ ցանկապատնեշի որոշ հատվածներ: Հենց այս հատվածներում էլ սկսվեց հայկական հետևակի կատաղի գրոհը: Մի քանի ժամ տևած համառ, արյունալի մարտի ելքը երկար ժամանակ անորոշ էր մնում, մինչև, հավանաբար, վաղ առավոտյան հռոմեական հետևակը ցույց տվեց իր մարտական առավելությունը: Անհաջողության մատնված հայկական հետևակը, հեծելազորի պաշտպանության տակ, նահանջեց: Համառ, արյունալի ճակատամարտը ավարտվեց հռոմեացիների հաղթանակով: Հռոմեական ռազմական պատմության մեջ բազմիցս կրկնվող այս մարտաոճը նկարագրել են տասնյակ հռոմեացի

և հույն պատմիչներ[4,11,12,13,14]: Այդ բազմաթիվ նկարագրությունների հիման վրա մենք փորձել ենք մոտավորապես պատկերացնել կատարվածը: Արտաշես Բ-ն ուներ մեծաքանակ ու մարտունակ բանակ և լուրջ հիմքեր՝ համարելու, որ կկարողանա մեկ խորտակիչ հարվածով կործանել հռոմեական բանակը, ապա նահանջող հռոմեական բանակի մնացորդները ոչնչացնել իր մեծաքանակ հեծելազորի միջոցով: Նա թերագնահատել էր հռոմեական բանակի ոգին, հսկայական մարտական փորձը և տոկունությունը: Շրջապատելով հռոմեացիներին իրենց ճամբարում, Արտաշես Բ-ն նրանց այլընտրանք չթողեց. վերջիններս պետք է կամ հաղթեին, կամ ամբողջապես կործանվեին: Խախտվեց ռազմական արվեստի հիմնարար սկզբունքներից մեկը. «Հակառակորդին միշտ նահանջելու հնարավորություն տուր», այլապես դու նրան գցում ես Սուն Ցզիի (Ք.ա. V դ., Չինաստան) «Մահվան տեղանքում՝ կռվիր» վիճակի մեջ, որտեղ մահվան դատապարտված բանակը կարող է դառնալ աշխարհում ամենահզոր՝ անպարտելի ուժը[8]:

Պարտված հայոց արքա Արտաշես Բ-ն իր հեծելազորով հեռանում է Պարթևստան: Անտոնիուսը իր հաղթանակի մասին հաղորդում է ուղարկում Ալեքսանդրիա և Հռոմ: Օկտավիանուսը դատապարտում է Անտոնիուսին Հռոմի «հավատարիմ» դաշնակից Արտավազդ Բ-ին «ստորաբար» գերեվարելու համար:

Ծանր պարտությունից հետո քաղաքամայր Արտաշատը անպաշտպան էր և չդիմադրեց Անտոնիուսին: Մեծ Հայքի թագավորությունը 34–31 թթ. մնում էր բռնագրավված, սակայն չէր ճանաչում Հռոմի իշխանությունը, որովհետև օրինական արքան Արտաշես Բ-ն էր, որը ապաստանել էր Պարթևստանում և պատրաստվում էր պայքարի: Նա դեռ կգրավի Ատրպատականի թագավորությունը, իսկ Ք.ա. 31 թ. հաղթական կվերադառնա Հայաստան[6]:

Գրքում հայոց պատմության առանձին ժամանակաշրջաններ լուսաբանված են տարբեր խորությամբ: Նկատվում է որոշ ժամանակահատվածների խոր ուսումնասիրությունների պակասը: Ռազմական իրադարձությունների մեծ մասը ներկայացված է հպանցիկ և մակերեսորեն: Կան նաև բազմաթիվ այլ նկատողություններ, որոշ հարցեր առանձին քննարկման և ճշտման կարիք ունեն:

Գունավոր ներդիրում տեղադրված Արածանիի ճակատամարտի դրվագը պատկերող Ռուբեն Մանասերյանի գծանկարը հիասքանչ է: Նույն էջում տեղադրված նրա Արածանիի ճակատամարտի հատակագիծը բարի ժպիտ է առաջացնում... (Հին աշխարհի ճակատամարտերի հատակագծերը կատարվում են այս գիտակարգում ավանդաբար օգտագործվող որոշակի սկզբունքներով և գրաֆիկ տարրերով):

Ես համոզված եմ, որ բոլոր նմանատիպ լուրջ, հատկապես պատվավոր ակադեմիական անվանմանը հավակնող հրատարակություններում ներկայացվող ռազմական դրվագները պետք է ենթարկվեն «Հին աշխարհի ռազմական պատմություն» գիտակարգով զբաղվող մասնագետների փորձագիտական քննությանը:

Համենայն դեպս, ողջունենք այս հրատարակությունը և սպասենք «Հայոց պատմություն» բազմահատորյակի վերջին չհրատարակված հատորին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Ա. Տիգրան Մեծի բանակը մ.թ.ա. 95-55 թթ. Պրակ I. - Եր.: «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2009. - 372 էջ, նկ. («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար. հատոր II):
2. Գևորգյան Ա. Տիգրան Մեծի բանակը մ.թ.ա. 95-55 թթ. Պրակ II. - Եր.: «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2010. - 449 էջ, նկ. («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար. հատոր II):
3. Գևորգյան Ա. Տիգրան Մեծի բանակը մ.թ.ա. 95-55 թթ. Պրակ III. - Եր.: «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2011. - 484 էջ, նկ. («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար. հատոր II):
4. Կորաբլյով Ի. Շ. Հաննիբալ. Ռուս. թարգմ.՝ Վ. Մ. Վարդանյանը. Խմբ.՝ Ս. Մ. Գրքաշարյան. - Եր.: «Հայաստան» հրատ., 1984. - 488 էջ:
5. Հայոց պատմություն. Հատոր I. Հին դարեր (Հին քարի դար – Ք.հ. III դար). Գիրք երկրորդ (Ք.ա. IX դար – Ք.հ.III դար). - Եր.: «Զանգակ» հրատ., 2024. - 698 էջ + 24 էջ ներդիր:
6. Մանասերյան Ռուբեն. Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ. - Եր.: «Արեգ», 1997. - 216 էջ:
7. Մանասերյան Ռուբեն. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94–64 թթ. Երկրորդ, լրացված հրատ. - Եր.: Լուսակն, 2007. - 260 էջ:
8. Սուն-Ցզի. Ստրատեգիայի արվեստը. Թարգմ.՝ Արտաշես Տեր-Հովհաննիսյան. - Եր.: Բյուրոկրատ, 2013. - 176 էջ:
9. Конноли, П. Греция и Рим. Энциклопедия военной истории. Пер. с англ. С. Лопухова, А. Хромова. - М.: «Эксмо-Пресс», 2000. www. roman-glory.com
10. Крисп, Гай Саллюстий. Сочинения. Пер. с лат. В. О. Горенштейна. - М.: Издательство «Наука», 1981. - 224 с. (Серия «Памятники исторической мысли»).
11. Ливий, Тит. История Рима от основания города. Том II. Пер. с лат. - М.: Издательство «Наука», 1991. - 528 с. (Серия «Памятники исторической мысли»).

12. Ливий, Тит. История Рима от основания города. Том III. Пер. с лат. - М.: Издательство «Наука», 1994. - 768 с. (Серия «Памятники исторической мысли»).
13. Махлаюк Александр, Негин Андрей. Римские легионы: самая полная иллюстрированная энциклопедия. - М.: Эксмо: Яуза, 2018. - 416 с. (Серия «Лучшие воины в истории»).
14. Полибий. Всеобщая история. Том I. Книги I–X. Пер. с древнегреч. Ф. Мищенко. - М.: ООО «Издательство АСТ», 2004. - 765 с. (Серия «Историческая библиотека»).
15. Разин, Е. А. История военного искусства XXXI в. до н.э. - VI в. н.э. - СПб.: ООО «Издательство Полигон», 1999. - 560 с.

РЕЗЮМЕ

ОБ ОШИБКАХ ВО ВТОРОЙ КНИГЕ ПЕРВОГО ТОМА «АРМЯНСКОЙ ИСТОРИИ»

Поздней осенью 2024 г. вышла в свет вторая книга первого тома академического четырехтомника в восьми книгах «Армянская история». Надеемся, что в 2025 г. выйдет в свет последняя неизданная первая книга первого тома и проект, начавшийся в 2010 г. будет успешно завершен.

Выход в свет данного полутома значительное событие в научной жизни страны. Книга написана хорошим научным языком, дан исторический анализ событий, в конце каждого раздела сделаны необходимые обобщения. Вместе с этим данное издание содержит некоторое количество досадных ошибок в области военной истории древнего мира, часть из которых разбирается в данной статье. Вызывает удивление небольшой объем книги и большой размер шрифта, использованный в книге.

Авторы считают, что армяно-римская война длилась с 69 по 67 гг., но она закончилась в 66 г. подписанием мира с Гнеем Помпеем

Магном. Описание событий армяно-римской войны 69–66 гг. до р.Х. с точки зрения военной истории древнего мира сделано непрофессионально. Есть ошибки в оценке количества участников разных сражений, например в Тигранакертском сражении 6 октября 69 г. до н.э. неизвестно откуда взялись цифры 15.000 римских всадников, а также 18.000 легионеров, участвующих в фланговом ударе римской армии. Спутанно и нереально описан ход сражения.

Весь ход военных действий армяно-римской войны описан поверхностно и неточно. Есть ошибки при описании сражений 68 г. при Арацани и третьего большого сражения на юге Армении, игнорировано большое сражения у Зелы в Понте в 67 г., где армяно-понтийская армия под командованием Митридата Евпатора наголову разбила римскую армию Трирария.

В 34 г. до н.э. недалеко от Арташата произошло большое и кровопролитное сражение между армянской и римской армиями. Согласно авторам, Арташес II попытался освободить своего отца — Артавазда II, плененного Антонием, путем атаки армянской кавалерией традиционно укрепленного рвом и частоколом римского лагеря. Это доказывает, что авторы не имеют никакого представления о военном деле древнего мира.

Указанные ошибки, а они не единственные, в следующих изданиях книги придется исправлять. Самое главное, в последующих изданиях, военные аспекты истории должен излагать ТОЛЬКО специалист по военной истории древнего мира.

SUMMARY

ON THE ERRORS IN THE SECOND BOOK OF THE FIRST VOLUME OF THE MULTI-VOLUME "ARMENIAN HISTORY"

In late fall 2024, the second book of the first volume of the academic four-volume eight-book "Armenian History" was published. We hope that in 2025 the last unpublished first book of the first volume will be published and the project that began in 2010 will be successfully completed.

The publication of this half-volume is a significant event in the scientific life of the country. The book is written in good scientific language, provides a historical analysis of the events, and at the end of each section the necessary generalizations are made. Unfortunately, the publication contains a number of errors in the field of military history of the ancient world, some of which are analyzed in this article. Also, the small volume of the book and the large font size used in the book seem to be surprising.

The authors of the academic publication believe that the Armenian-Roman War lasted from 69 to 67 BCE, but in fact it ended in 66 with the signing of peace with Gnaeus Pompeius Magnus. The description of the events of that war in the context of the ancient military history does not appear to be professional. The number of participants in various battles, for example, in the Battle of Tigranakert on October 6, 69 BCE, is assessed inaccurately. The source of the figures of 1,5000 Roman horsemen and 1,8000 legionaries participating in the flank attack of the Roman army is not mentioned. The course of the battle is described in a confused and unrealistic way.

The entire course of military operations of the Armenian-Roman war is described superficially and inaccurately. Errors can be observed in the description of the battle of Aratsani in 68 BCE, while the third major battle in the south of Armenia, the battle at Zela in Pontus in 67 BCE, where the Armenian-Pontic army under the command of Mithridates Eupator utterly

defeated the Roman army of Trirarius, is completely ignored.

In 34 BCE, a large and bloody battle between the Armenian and Roman armies took place near Artashat. According to the authors, Artashes II attempted to free his father, Artavazd II, who had been captured by Antony, by attacking the Roman camp, traditionally fortified with a ditch and palisade, with Armenian cavalry. This proves that the authors have little idea about the military affairs of the ancient world.

The errors mentioned, and they are not the only ones, will have to be corrected in future editions of the book. Most importantly, the military aspects of history should be presented in the future academic publication only by a specialist in the military history of the ancient world.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շնորհակալություն.....7

Նախաբան 9

Հոդված 1. Հայոց պատմության հնադարից միջնադար անցման ժամանակաշրջանի ճշտումը և նոր պարբերականացման անհրաժեշտությունը 10

Հոդված 2. Կատաֆրակտներ. Հին աշխարհի գերծանր հեծելազորը. Մաս Ա. Ք.ա. II–I դդ.....32

Հոդված 3. Ալեքսեյ Լոսևի գիտական ժառանգությունը հայերեն թարգմանելու անհրաժեշտության մասին 60

Հոդված 4. «Հայոց պատմություն» բազմահատորյակի առաջին հատորի երկրորդ գրքում տեղ գտած վրիպակների մասին 74

СОДЕРЖАНИЕ

НОВАЯ ПЕРИОДИЗАЦИЯ ДРЕВНОСТИ И СРЕДНЕВЕКОВЬЯ В АРМЯНСКОЙ ИСТОРИИ 29

КАТАФРАКТЫ: СВЕРХТЯЖЕЛАЯ КАВАЛЕРИЯ ДРЕВНЕГО МИРА. ЧАСТЬ 1 . II–I ВВ. ДО Р.Х. 57

О НЕОБХОДИМОСТИ ПЕРЕВОДА НАУЧНОГО НАСЛЕДИЯ АЛЕКСЕЯ ЛОСЕВА НА АРМЯНСКИЙ ЯЗЫК 71

ОБ ОШИБКАХ ВО ВТОРОЙ КНИГЕ ПЕРВОГО ТОМА «АРМЯНСКОЙ ИСТОРИИ» 89

CONTENTS

NEW PERIODIZATION OF THE ANTIQUITY AND MEDIEVAL ARMENIAN HISTORY 30

CATAPHRACTES: SUPERHEAVY CAVALRY OF THE ANTIQUITY. PART I. II-I CENTURIES BCE 58

ON THE NECESSITY OF TRANSLATION OF ALEXEY LOSEV'S SCIENTIFIC LEGACY INTO ARMENIAN 72

ON THE ERRORS IN THE SECOND BOOK OF THE FIRST VOLUME OF THE MULTI-VOLUME "ARMENIAN HISTORY" 91

ՇՈՒՏՈՎ.

Արա Գևորգյան
ԿԼԻՈՅԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

Հոդվածների ժողովածու.
Պրակ Բ

Հոդված 1. Չգնահատված մեծություն՝ Արտաշես Բ արքայից արքայի ռազմաքաղաքական գործունեության գնահատականը

Հոդված 2. Պոմպեուսի և Կեսարի ստվերում. Լուկիուս Լիկինիուս Լուկուլլուսը՝ Հռոմի մեծ զորավար (ռուս.)

Հոդված 3. Ք.ա. 53 թ. Խառանի ճակատամարտը. Նոր հայացք (ռուս.)

Հոդված 4. Կատաֆրակտներ. Հին աշխարհի գերծանր հեծելազորը. Մաս Բ. I–III դդ.

Հոդված 5. Սուն Ծզայի երեքական հայերեն և ռուսերեն ու մեկ անգլերենից ռուսերեն թարգմանությունների մասին

Հոդված 5. Հին աշխարհի գրականություն. ռազմական արվեստին վերաբերող հիմնական երկերը

Արա Գևորգյան

ԿԼԻՈՅԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

Հոդվածների ժողովածու

Պրակ Ա.

Խմբագիր-սրբագրիչ՝ Մարգարիտ Արիստակեսյան
Համակարգչային ձևավորումը՝ Լիանա Մինասյանի
Կազմի ձևավորումը՝ Արտակ Հարությունյանի

EDIT PRINT
43 D.Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am